



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

308

---

2-98





Հ Ա Պ Օ Ն Ի Ա

Կ Ա Ս

ԾԵԳՈՂ ԱՐԵՔԵԿԻ ԵՐԿԻՐԸ



308  
C-98

թԳՅԼԻՉ 1901

Տպարան «ՀԵՐՄԻՍ» Միխայիլյան Փող. 81.

ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԳԱՐԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ.

Այս վերնագրով հետզհետե լոյս կը տեսնեն Հ. Առաքելեանի խմբագրութեամբ և հրատարակութեամբ մի շարք երկասիրութիւններ—ինքնուրոյն և թարգմանական—ընդհանուր գրական, պատմական, փիլիսոփայական, գիտական, բնլլետրիստիական-գեղարուեստական բովանդակութեամբ, հանրամատչելի—ժողովրդականացըրած ձևով և էժանագին: Կը հրատարակեն նաև երևելի մարդկանց կենսագրութիւններ՝ կրտսերական, արևմտեան-եւրոպական, ռուսական, հայկական և արևելեան աշխարհներէց, ինչպէս և գրքեր՝ մանուկների ընթերցանութեան համար ու դասագրքեր:

Գ. Ս. Յ. Ե. Ե. Ե.

308  
Ե-98  
Այ

25 SEP 2006  
1 DEC 2009

Գ. Ի. ՇՐԷՅԻՆԻ

Ճ Ա Պ Օ Ն Ի Ա

Կ Ա Մ

ԾԱԳՈՂ ԱՐԵԳԱԿԻ ԵՐԿԻՐԸ

Մի պատկերով և քարտէսով



Հրատարակիւմ է պ.պ. Եգոր Զօհրաբեան և Միլևա Սուրխակեան ընկ. ծախսով:

ԹԻՖԼԻՉ 1904

Տպարան „ՇԵՐՄԷՍ“ Միխայիլեան Փող. 81.  
(10)


15.07.2013  
15.07.2013

112479

Дозволено цензурою 2 Февраля 1904 г. Гор. Тифлисъ



70  
42



Հատրման փաստերը:—Հատրմանու սխալը:

## ԱՌԱՋԱԲԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԻ:

Ռուս-ճապոնական ներկայ ազետալի պատե-  
րազմը ստիպեց մեզ հետաքրքրվել մի երկրով,  
որ 20—30 տարի առաջ բոլորովին անձանթ էր  
մեզ և ոչ մի հետաքրքրութիւն չէր յարուցանում  
մեր մէջ: Ռուսաց մամուլը և հասարակական կար-  
ծիքը մի քիչ աւելի շուտ հարկադրվեց ուշադրու-  
թիւն դարձնել այդ տարօրինակ և անյայտ երկրի  
վրա, այն է այն օրից, երբ ճապոնիան 1894-ին  
պատերազմ սկսեց Չինաստանի դէմ և երբ նա  
կըքեց, 1902 թ. յունվարի 17-ին, դաշնակցու-  
թիւն Անգլիայի հետ: Հասարակութեան այդ հե-  
տաքրքրութեան գոհացումն տալու համար, հետ  
զհետէ հրատարակվեցին մի շարք գրուածներ,  
որոնց մէջ ընդհանուր և հանրամատչելի ընթեր-  
ցանութեան համար ամենայարժարն է Շրէյդէրի  
պատմուածքը: ճապոնացիների մասին «Ժագող  
Արեգակի երկեծը» վերնագրով, որ սահմանված է  
յաակապէս Ժողովրդական գրադարանների և ըն-  
թերցարանների համար և որ մտել է յայտնի  
ռուս հրատարակչուհի Պոպովայի հրատարակու-  
թիւնների շարքը, հրատարակութիւնների, որոնք

առ հասարակ, յայտնի են իրանց լուրջ բովան-  
դակութեամբ:

Մտադիր լինելով մեր ձեռնարկած «Հանրա-  
մատչելի Գրադարանի» հրատարակութիւնների  
մէջ տալ և պատմութեան զանազան երկիրների  
և ժողովուրդների մասին, մենք նպատակաշար-  
մար համարեցինք, ի նկատի ունենալով օրվայ  
հետաքրքրութիւնը, տալ Շրէյդէրի վերոյիշեալ  
գործի թարգմանութիւնը, կցելով նաև մի քար-  
տէս պատերազմական բեմի և մի քանի լրացու-  
ցիչ տեղեկութիւններ ճապոնիայի մասին, քա-  
ղելով պրոֆէսօր Մարչալի «Տասնեկններորդ Դա-  
րի պատմութիւն» գրքից:

Հ. Ա.



I.

ՃԱԳՈՆԻԱՆ ԱՌԱՋ ԵՒ ԱՅԺՄ:

Եւրոպական Ռուսաստանից աւելի քան տա-  
սը հազար վերստ հեռու, Ասիայի ամենաարևե-  
լեան ծայրում, ամեն կողմից Մեծ Ովկիանոսի  
խոր ջրերով շրջապատուած՝ բարձրանում են փո-  
քըր, բայց բազմաթիւ լեռնօտ կղզիներ և կղզեակ-  
ներ, որոնք համարեա ամբողջ տարին ծածկուած  
են պճնազարդ կանաչ բուսականութեամբ:

Առողջարար կլիմա, պտղատու հովիտներ,  
բազմամարդ քաղաքներ ու գիւղեր ունեցող այս  
բազմաթիւ կղզիներում բնակվում է մեր ժամա-  
նակի մի ամենանշանաւոր ժողովուրդ—գործու-  
նեայ, միշտ ուրախ ճապոնացին: Այս ժողովրդի  
համբաւը թափանցել է բոլոր երկիրները: Ճա-  
պոնացիները բոլոր իրանց այցելող ճանապար-  
հորդների մէջ ներշնչում են զարմանքի և խոր  
յարգանքի զգացմունք: Նրանք հիացնում են օ-  
տարնեշին իրանց գործած արագ առաջադիմու-



Թեամբ, լուսաւորութեամբ, գիտութեան, առ-  
 ևտրի, արդիւնաբերութեան, զինւորական և ծո-  
 վային արուեստի, հասարակական ու պետական  
 կազմի ու վարչութեան շրջանների մէջ:

Ճապոնացիները ոչ միայն յետ չեն մնացել  
 աշխարհիս քաղաքակիրթ երկիրներից ու ազգե-  
 րից, այլ և մինչև անգամ շատ բանով, ինչպէս  
 կը տեսնենք յետոյ, գերազանցել են: Այս բա-  
 նում կը համոզուի իւրաքանչիւր ոք, ով թէկուզ  
 շատ կարճ ժամանակով կայցելէ այդ զարմանալի  
 երկիրը:

Ամեն տեսակ ֆաբրիկներ, դործարաններ,  
 նաւաշինարաններ, օրինակելի երկաթուղիներ,  
 առևտրական և պատերազմական նաւատորմիդի  
 բազմաթիւ նաւեր, ելէքտրական լուսաւորութիւն  
 գրեթէ բոլոր քաղաքներում, օրինակելի սալայա-  
 տակներ, սքանչելի մաքրութիւն և կարգ ոչ մի-  
 այն քաղաքներում, այլ և գիւղերում. ընտիր խը-  
 ճուղիներ ամեն կողմում, դաշտերի և մարզերի  
 խնամկոտ ոռոգումն ու մշակումն, համատարած  
 գրագիտութիւն, բազմաթիւ ուսումնարաններ, —  
 ահա թէ առաջին անգամից ինչ է խփում ճա-  
 պոնիա մտնողի աչքին:

Այս երկիրը ներկայումս Ասիայի արևելքում  
 ամենազօրեղներից մէկն է: Նրա ձայնը լսում են  
 Հին և Նոր աշխարհի զօրեղ և քաղաքակիրթ պե-  
 տութիւնները, և նա, թէ իրաւունքով և թէ ըստ

արժանոյն աշխարհի զօրեղ պետութիւնների շար-  
 քում պատուաւոր տեղ է բռնում:

Նա այդ դրութեան հասաւ ոչ կոպիտ ուժով  
 և ոչ ևս իր զօրքերի բազմութեամբ: Ընդհակա-  
 ռակը, ճապոնիան փոքր երկիր է. իր տարածու-  
 թեամբ նա հաւասար է ռուսական հինգ, վեց  
 նահանգների. նրա ազգաբնակչութիւնը 40 միլիո-  
 նից աւել չէ և, չը հաշուելով Չինաստանի հետ  
 ունեցած վերջին կռիւը, երբէք պատերազմներ  
 չէ ունեցել հարևան պետութիւնների հետ:

Նրա ներկայ դրութիւնն ու նշանակութիւնը  
 այնքան աւելի դարմանալի են, որ մի քիչ ժամա-  
 նակ առաջ ճապոնիայի և ճապոնացիների մասին  
 ոչինչ յայտնի չէր: Ամենքը սովոր էին մտածել,  
 որ ճապոնիան վայրենի երկիր է, բնակուած ան-  
 կիրթ և գռեհիկ ժողովրդով. — և քաղաքակիրթ  
 պետութիւնները վերաբերվում էին դէպի նա  
 այնպէս արհամարհական կերպով, ինչպէս այ-  
 ժըմ դէպի Կօրէան, Չինաստանը, և ուրիշ վայ-  
 րենի երկիրները \*):

\*) Ծան. Հետաքրքիր է, որ 1668 թ. Ամստերդամում ուղված  
 «Իրը աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք»  
 հայերէն գրքի մէջ ճապոնիայի մասին միայն հետեւեալ պիտակի կայ:  
 «Սէնեացւոյն առերի կալով ձենաց մինչև ցանձանօթ ևրկիր-  
 յորում բնակեալք են ազգք եօթն: Ունի լերինս՝ և գետս բազում, բայց  
 անտի յանձանօթ երկիրն՝ սր ինչ պատմի անհաւատալի է: Գագանք  
 անձանօթք մարդակերպք՝ կիտանձնեալք. երկդիմիք՝ վեց ձեռնիք՝  
 փոկոտունք, վիշտ պատտունք, կիտահալք, կիտանգամք, անգլուխք»:

Երեսուն կամ երեսուն հինգ տարի առաջ՝ ճապոնիան, ձեռքով—օտքով կաշկանդուած՝ հնա-  
ւանդ սովորութիւնների փասած օրէնքներով, ան-  
միտ նախապաշարմունքներով ու մնոտիապաշ-  
տութիւններով, խարխափում էր խաւարի և տգի-  
տութեան մէջ:

Այն ժամանակ նա աշխարհից կտրուած էր: Միւս երկիրներից շատ քիչ մարդիկ էին գալիս այստեղ, և եկողներն էլ մեծ մասամբ ակամա-  
յից: Նրանք, մեծ մասամբ, ճապոնիայի ավերում խորտակուած նաւերից փրկուած նաւաստիներ էին լինում: Նրանք էլ երկար ժամանակ չէին մը-  
նում այնտեղ, որովհետև տեղական օրէնքների և սովորութիւնների համաձայն օտարերկրացիները իրաւունք չունէին ճապոնիայում բնակուելու: Ներկայ չինացիների և կօրէյցիների նման, ճա-  
պոնացիները ոչ ոքի չէին թոյլ տալիս իրանց եր-  
կիրը մտնելու և այդպիսով նա բոլոր օտարերկ-  
րացիների համար անմատչելի էր:

Ինչ վերաբերում է իրանց՝ ճապոնացիներին, նրանք խիստ պատժից վախենալով ոչ մի տեղ չէին գնում կղզիներից դուրս: Նոյն իսկ պատա-  
հաբար օտար երկիրներ չերթալու համար, օրէնքով արգելուած էր մեծ նաւեր շինել, որոնցով կարելի լինէր հեռու գնալ:

Հարիւրաւոր և հազարաւոր տարիներ շա-  
րունակ նրանք ապրում էին իրանց ուրախ և

գեղարուեստական կղզիների վրա, բոլորովին մե-  
կուսացած, փակ կեանքով, ինչպէս մի ընդար-  
ձակ բանտում: Սւելի ևս հսկում էին, որ ոչ ոք  
ներս չը մտնէ իրանց երկիրը: Իւրաքանչիւր օ-  
տարերկրացուց խուսափում էին, ինչպէս թոյնից  
կամ վնասակար հիւանդութիւնից: Նրանք սաս-  
տիկ հաւատում էին այն հին աւանդութեան, թէ  
երբ մի օտարերկրացի ազատ մուտք գործէ ի-  
րանց երկիրը, այն ժամանակ իրանց հայրենիքը  
կը կործանուի:

Այդ ժամանակ, երբ միւս երկիրներում կեանքը հետզհետէ յեղափոխում էր ամեն բան և եւրոպացիները (անգլիացի, ֆրանսիացի, ամերիկացի, ռուս) իրանց արագընթաց շոգենա-  
ւերով մօտենում էին հետզհետէ նրանց առանձ-  
նացեալ կղզիներին,—ճապոնացիները նոյն իսկ  
այդ բանի մասին երկար ժամանակ ոչ մի կաս-  
կած չունէին: Նրանք բացի իրանց մայրենի լեզ-  
ւից, ուրիշ ոչ մի լեզու չը գիտէին, մինչև ան-  
գամ գաղափար չունէին ուրիշ ազգերի և եր-  
կիրների գոյութեան մասին, չը գիտէին, թէ  
ինչպէս են ապրում ուրիշ մարդիկ աշխարհի վը-  
րա, ինչ են ներկայացնում, ինչի են ձգտում,  
ինչով են ապրում և շնչում, ինչ է տուել նրանց  
գիտութիւնը և լուսաւորութիւնը:

Մինչև անգամ վախենում էին և չէին ցան-  
կանում գիւղենալ այդ ամենը, որովհետև հին

նախապաշարումները և դարերով սրբագործուած սովորութիւնները համարուած էին այդ հետաքրքրութիւնը— սրբապղծութիւն:

Ճապոնացիները շատ հպարտանում էին իրանց գիտցածով, իրանց սեպհական ունեցածով և չինական հին գրքերի ուսմունքներով \*): Նըրանք ինքնասէր էին, բոլոր մարդկանցից իրանց բարձր էին համարում և ուրիշներից սովորելը կամ որ և է բան փոխ առնելը ոչ միայն անկարելի էին համարում, այլ և յանցաւոր գործ:

Սակայն նրանք լաւ չէին ապրում. և խելացի միտքը կարծես ասում էր նրանց, որ վատ չի լինի մի քիչ բան էլ սովորել ուրիշներից. միայն անտիպապաշտութիւնը և հնացած սովորութիւնները խափանում էին այդ մտքի իրագործումը:

Այն ժամանակ ճապոնիայում ամենից վատթար էր ապրում հասարակ ժողովուրդը, որ ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ մեծամասնութիւն է կազմում: Սակայն միայն հասարակ ժողովուրդը չէր ծանր դրութեան մէջ: Ճապոնացիների ամենագլխաւոր իշխանաւորի վիճակն էլ շատ քիչ էր լաւ ուրիշներից: Նոյն իսկ նա, համեմատած իր ստորագրեալ հպատակների ստրուկների հետ, երկրի ամենաթշուառ մարդն էր: Ունենալով ամենամեծ իշխանութիւն, որպիսին միայն հնարա-

\*) Ճապոնիայում մինչև վերջին ժամանակներս կրթուած դասակարգի լեզուն չինականն էր:

ւոր է մարդին ունենալ երկրի վրա, լինելով տէրութեան ամենահզօր մարդը, նա, միևնոյն ժամանակ ամենից շատ էր կաշկանդուած նախապաշարումներով և իր հպատակներից աւելի քիչ էր կարողանում օգտուել իր ազատութեամբ:

Ճապոնիայի հասարակական և պետական կազմակերպութիւնը այսպէս էր.—

Տէրութեան մէջ ամենամեծ մարդը կայսրն էր կամ «միկադօն», ինչպէս կոչում էին նրան ճապոնացիները: Ճապոնացիների կրօնական համոզմունքով նա ոչ միայն Աստուծո՛ւ օձեալն է, այլ և նրա երկրաւոր ժառանգը. նա երկրային աստուածն է, ճապոնական ամենամեծ աստուածութեան՝ արևի աստուածուհու՝ Տէնշիօ-դայշինի թոռան թոռն ուղիղ գծով:

Երկիրըը նրա հայրն էր, երկիրը—մայրը, արևն ու լուսինը—բարեկամները: Ժողովուրդը վերաբերում էր նրան մեծ յարգանքով, ինչպէս Աստուծուն: Ոչ միայն չէր կարելի նրան մօտենալ, հպել, այլ և մինչև անգամ հասարակ մահկանացուները իրաւունք չունէին նրան տեսնել:

Նա իր ամբողջ կեանքը, ըստ հին սովորութեան, անց էր կացնում արքունիքի մէջ, երբէք դուրս չը գալով այդտեղից և չերևալով իր հպատակներին: Նոյն իսկ ճապոնացիների մէջ տարածուել էր այն համոզմունքը, թէ իրանց միկադօն ամբողջ օրը նստած է իր գահի վրա և նա-

յում է մի կէտի: Հաւատում էին, որ միկաղօն երկրաւոր աստուած լինելով երբէք չէ կտրում իր յարաբերութիւնները երկնային աստուածների հետ և իւրաքանչիւր տարուայ տանն և էկերորդ ամսում նա գնում է նրանց հետ խօսելու իր երկրի գործերի մասին: Նոյն իսկ ճապոնացիները ցոյց էին տալիս այն տեղը, որտեղ խօսակցում էին նրանք:

Թէ ինչ էր անում միկաղօն ամբողջ տարուայ ընթացքում, մինչև այսօր անյայտ է մնացել: Յամենայն դէպս, նա պետական գործերով չէր զբաղվում: Այդ բանը, իբրև երկրային գործ, անարժան էր նրան: Այսպիսով ուրեմն միկաղօն բարձրագոյն պետ էր միայն անունով: Իսկական իշխանութիւնը պատկանում էր զօրքերի հրամանատարին, որին կոչում էին տայկուն կամ սիօզուն: Այս պաշտօնը ժառանգական չէր, և ամեն անգամ սիօզունը նշանակվում և հաստատվում էր իր պաշտօնի մէջ՝ միկաղօնից: Բայց սա դատարկ ձևականութիւն էր: Միկաղօն սաստիկ թոյլ էր և արտաքին աշխարհի գործերից հեռու, և նրա կամքը ոչ մի նշանակութիւն չունէր: Եւ սիօզունները միշտ ստիպւում էին նրան հաստատել պաշտօնի մէջ ոչ միայն իրանց, այլ և իրանց ժառանգներին իրանց կենդանութեան ժամանակ: Շնորհիւ այս հանգամանքների, պատահում էր այնպէս, որ սիօզունի իշխանութիւնը անցնում

էր ցեղից ցեղ, մինչև որ երևան էր գալիս մի աւելի համարձակ անձն, որ միկաղօնին իր կողմն էր գրաւում և սիօզունին հեռացնելով, իր ձեռքըն էր ձգում վերջինիս իշխանութիւնը: Միկաղօնի և սիօզունի այս երկպետ իշխանութիւնը միշտ պատճառ էր դառնում ճապոնիայում ամենատեսակ երկպառակութիւնների և արիւնահեղ եղբայրասպան կռիւների:

Նոր միկաղօնի կամ սիօզունի գահ նստելու ժամանակ երևան էին գալիս բազմաթիւ մարդիկ, որոնք աշխատում էին իրանց ձեռքը ձգել միկաղօնին և սիօզունի տեղը նստել:

Այս պատճառով էլ ճապոնիայում ինտրիգները, որոգայթները, դաւաճանութիւնները և մատնութիւնները չէին վերջանում: Կռիւր իշխանութեան համար, որ երբեմն այնպէս հեշտ պսակվում էր աշողութեամբ միկաղօնի կատարեալ անզօրութեան և իրաւագրկութեան պատճառով, երբէք չէր դադարում: Փոխադարձ կասկածանքները առաջ էին բերում խիստ, դաժան օրէնքներ և պատիժներ, ժողովրդի մէջ զարգանում էնվ բազմաթիւ ախտեր, որոնք վարակում և փչացնում էին երկիրը, — լրտեսութիւն, քսութիւն, մատնութիւն և այլն: Այս միջոցներով օգտվում էին բոլոր բարձր պաշտօնեաները, որպէսզի ժամանակին իմանան իրանց դէմ սարքվող որոգայթները և ոչնչացնեն թշնամիներին: Բայց կարծես

այդ էլ քիչ էր թուում նրանց: Իշխանութիւնը իրանց ձեռքում երկար պահելու, նրան ապահովելու և իրանց ժառանգներին յանձնելու համար, սիօգունները սկսեցին իրանց շուրջը խմբել վատահելի մարդկանց, որոնց վրա կարող էին դնել իրանց ամբողջ յոյսը, հարկաւոր դէպքում: Որովհետև սիօգունները մեծ իրաւունք ունէին և միկադօյին խաղալիք էին դարձրել իրանց ձեռքում, ուստի նրանք շատ միջոցներ ունէին բազմաթիւ մարդկանց իրանց շուրջը խմբելու: Նրանք բաժանում էին հողեր, աստիճաններ, հագեւոր պաշտօններ, և այդպիսով հետզհետէ իրանց շուրջն էին խմբում բազմաթիւ մանր պետերի, որոնք կոչվում էին ղայմիօսններ: Այս դայմիօսները պարտաւոր էին իրանց հաշուով ունենալ զինուորեալ բանակներ, և իրանց ամբողջ ստացուածքով ու զօրքերով հպատակվում էին սիօգունին: Դայմիօսների վրա յենուելով, սիօգունը դարձաւ երկրի ամենագորեղ մարդը:

Սակայն որքան աւելի էին ուժեղանում դայմիօսները, այնքան սակաւ էին համակրում սիօգունին և իրանց ստացուածքն ու հարստութիւնը բաժանում նրա հետ, և հետզհետէ նրանք սկսեցին մտածել սիօգունի հովանաւորութիւնից դուրս գալու մասին: Վերջի վերջոյ նրանց աջովեց այդ բանը, և ահա մենք տեսնում ենք, թէ ինչպէս ճապոնիայում երեսացին առանձին ինք-

նուրոյն անկախ փոքրիկ իշխաններ, որոնք անունով միայն հնազանդվում էին սիօգունին: Նրանք ունէին իրանց օրէնքը, դատարանը, ոստիկանութիւնը և զօրքը: Նրանցից շատերը հոգս էին տանում իրանց սեպհական կալուածքները ընդարձակելու, ուստի շարունակ կուլում էին հարեան իշխանների հետ: Ճապոնիայում տեղի էին ունենում մշտապէս թշնամութիւն, դաւադրութիւն, մատնութիւն և անդադար ներքին կռիւներ: Բոլորի համար մի ընդհանուր իշխանութիւն չը կար չկային միատեսակ օրէնքներ:— Իւրաքանչիւր իշխանութեան մէջ տիրում էին առանձին կարգեր: Իւրաքանչիւր երկիր բաժանուած էր իր առանձին զինուորական շրջանների, զօրաբանակների, և միշտ պատրաստ էր կռուի համար:

Պարզ է, որ այսպիսի պայմաններում զինուորականը կամ ընդհանրապէս զինուորեալ մարդը մեծ նշանակութիւն ունէր այս երկրում: Թէ այդ առանձնակի մանր իշխանիկների և թէ սիօգունի ամբողջ ոյժը պահպանվում էր բացառապէս սրբորով զինաւորուած մարդկանց քանակութեամբ. այն ժամանակ դեռ ճապոնացիները չը գիտէին հրազէնը: Սուրը մեծ դեր էր խաղում ճապոնիայում: Եւ սուր կրելու իրաւունք ունէին բարձր դասակարգին պատկանող ճապոնացիները: Այդպիսի մարդիկ կոչվում էին «երկսրանի», և ժողովուրդը պարտաւոր էր նրանց առաջ գլխարկը

վերցնել և ծունկ չոգել, այլապէս խիտ պատժի կենթարկվէր: Թէ որքան մեծ նշանակութիւն ունէր երկու սուր կրելու իրաւունքը, երևում է նրանից, որ ամենայեւին երկսրանին առանց դատաստանի և քննութեան կարող էր սպանել հասարակ մարդուն—վաճառականին, արհեստաւորին, երկրագործին, եթէ իրան թուար, թէ նա վիրաւորել է իրան կամ անպատուել:

Գոյութիւն ունէր նաև «րօնինների» դասակարգը: Սրանք երկսրաւորների սպասաւորներն էին, որոնք իրանց տէրերից ստանում էին իրաւունք երկու սուր կրելու:

Րօնինները ժողովրդի մէջ վատ յիշատակ են թողել մինչև այսօր: Նրանք, ինչպէս ագռաւներ, թափառում էին երկրի մէջ, կողոպտում էին ազգաբնակչութիւնը, քայքայում նրան հիմնովին, և թշուառ ժողովուրդը պատժի ու բռնաբարման երկիւղից չէր կարողանում ընդդիմադրել նրանց ու ոչ մի տեղ և ոչ ոքի չէր կարելի գանգատուել:

Ակներև է, որ այն ժամանակ ստորին բոլոր դասակարգերի դրութիւնը սոսկալի էր: Ճապոնիայի ազգաբնակչութիւնը բաժանուած էր հետևեալ դասակարգերի.—գիւղացիներ, երկրագործներ, վաճառականներ, արհեստաւորներ և աղքատներ: Բայց ամենաարհամարված և ստոր դասակարգերը—կաշէգործները և կոշկակարներն էին:

Բոլոր այս դասակարգերը, միասին վերցըրած, կազմում էին այն ժողովուրդը, որին երկսրանի իշխանը նայում էր շատ բարձրից և որի վրա նա ունէր լիակատար իշխանութիւն: Թէև ճապոնացիները բոլորովին ստրուկներ չէին և ոչ մի երկսրաւորի առանձնապէս չէին պաշտանում, բայց դրանով նրանց վիճակը ամենևին չէր թեթևանում, որովհետև նրանք ունէին մի քանի տէրեր, որոնցից իւրաքանչիւրը կարգադրում էր իր ուզածին պէս: Նրանք զուրկ էին ամեն իրաւունքից: Նրանք նոյն իսկ, ինչպէս վերևում ասացինք, իրաւունք չունէին գանգատուելու երկսրաւորների պատճառած ճնշման ու վիրաւորանքների համար: Եւ ո՞ւմ գանգատուէին նրանք:

Ահա թէ ինչ դրութեան մէջ էր գտնվում ճապոնիան դեռ ամենամօտ ժամանակներս: Հասկանալի է, որ երբ ճապոնացիները առաջին անգամ շփուեցին եւրոպացիների հետ և տեսան սրանց վարած կեանքը, նրանք չը կամեցան այլ ևս շարունակել իրանց ճնշուած կեանքը: Նրանք միանգամից պատառեցին նախապաշարմունքի բողբ. թօթափեցին իրանց վրայից այն ստրկութիւնը, որ երկար ժամանակ կռացրել էր իրանց մէջքերը դէպի գետին, և եռանդով ձեռնարկեցին իրանց հայրենիքի բարենորոգման: Նրանք հասկացան, թէ ինչ մեծ առաւելութիւն է տալիս եւրոպացիներին գիտութիւնն ու կրթութիւնը:

նը, և անօրինակ յափշտակութեամբ նրանք ըսկեցին հասնել նրանց այն բանի մէջ, ինչի մէջ որ իրանք չափազանց յետ էին մնացել: Կարճ ժամանակում նրանք համարեա թէ հաւասարվեցին իրանց ուսուցիչներին հետ:

Այժմ ճապոնիայում չը կայ այլ ևս ոչ մի բան նման նրան, ինչ որ կար սրանից 30—35 տարի առաջ: Նախկին դայմիօսները չնչուած են, նրանց անկախութիւնը խլուած է և զօրքերը ոչնչացրած: Սուրն էլ նոյնպէս դադարել է խաղալ նախկին դէրը, և երկսրաւորների դասակարգն այլ ևս գոյութիւն չունի: Փիւղացիները, վաճառականները և արհեստաւորները միւս դասակարգերի հետ հաւասար իրաւունքներ ստացան: Ամբողջ երկրում տիրում են միատեսակ օրէնքներ, որոնց հպատակում են բոլոր դասակարգերն, առանց խտրութեան: Դատարաններն միւսնոյն են բոլորի համար: Ստորին դասակարգերն էլ լիովին ազատ են և ոչ մի կախում չունեն իրանց նախկին բազմութիւ և դաժան տէրերից: Սիօգունի կոչումը վերացրուած է: Իշխանութիւնը պատկանում է միայն կայսրին (միկադօին): Բայց նա ինքնակալ կերպով չէ կառավարում. կառավարչութեան գործերում, օրէնքներ հրատարակելու, հարկեր նշանակելու գործին մասնակցում է ամբողջ ազգաբնակչութիւնը իր ներկայացուցիչների (պատգամաւորների) միջո-

ցով: Բոլոր նախկին ֆլասակար սովորութիւնները կորցրել են իրանց ոյժը, հին օրէնքները ոչնչացել են: Եւրոպացիներին իրաւունք է տուած մասնել երկրի բոլոր անկիւնները: Ինքը կայսրը այժմ ապրում է եւրոպական թագաւորների նրման և եռանդուն մասնակցութիւն ունի երկրի կառավարչութեան գործերում: Ասում են, որ նա սովորութիւն է դարձրել իրան, իր հպատակներին ծանօթացնել իր հայեացքների, մտքերի և ցանկութիւնների հետ: Շնորհիւ այդ բանի, նրա բոլոր հրամանները, կարգադրութիւնները և հրովարտակները աւելի շուտ հայրական խրատների ձև ունեն, քան մի իշխանաւորի հրամանների բնաւորութիւն: Օրինակ, նա իր հրովարտակներում բացարձակ կերպով բացատրում է ճայոնացիներին իր մտադրութիւնները և ենթադրութիւնները, խրախուսում է նրանց գիտական զբաղմունքները, յորդորում է նրանց գնալ արտասահման և նոյն իսկ չէ թագցնում իր պակասութիւնները: Բացի այդ, ներկայ կայսրը յայտնի է իր բարեսրտութեամբ,—այս բանի գլխաւոր ապացոյցն այն է, որ նա երբէք չէ ստորագրում մահուան դատավճիռներ: Օտարերկրացիները սաստիկ գովում են նրա հիւրասիրութիւնը և ջանասիրութիւնը: Նա մեծ ուրախութեամբ ընդունում է իր մօտ գիտնականներին, ճանապարհորդներին, բանաստեղծներին, քաղա-

քական գործիչներին և երբեմն նրանց հետ ժամերով զրուցում է:

Բայց չէ որ դեռ մօտերս, գլխատման պատժի երկիւղով նրան չէին կարող տեսնել նոյն իսկ ճապոնական ամենաբարձր պաշտօնեաները:

Ներկայումս ճապոնացիները անդարձ կերպով հրաժարվել են բոլոր նախապաշարմունքներից: Նրանց մէջ այլ ևս չէ նկատվում կասկածելի և թշնամական յարաբերութիւն դէպի օտարերկրացիները: Ընդհակառակը, նրանք սիրով մօտենում են նրանց, իւրացնում են նրանց ամեն մի լաւ կողմը և այդպիսով մեծ օգուտ տալիս իրանց հայրենիքին:



II.

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԵՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ: — ՃԱՊՈՆԱՅԻՆՆԵՐԸ,  
ՃԱՊՈՆՈՒՅԻՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Հեռու Եւրոպայից առաջին անգամ ծագունիա մտնող ճանապարհորդների աչքին մի գեղեցիկ տեսարան է երևում: Դեռ հարաւային առաջին նաւահանգիստը՝ Նագասակի չը հասած, նրա առաջ երևան են գալիս ծովի խորքից մանր, տարբերաձև կղզիներ, հարաւային գեղեցիկ և խիստ բուսականութեամբ ծածկուած: Նրանցից շատերը ծածկուած են զանազան ծաղիկներով, թէյի վարդերով, օսկեծաղիկներով, այնպէս որ նրանք երևում են իբրև ծովի խորքից դուրս եկող անհազին ծաղկանոցներ:

Ծագունիայի ափերի մօտ ծովը սովորաբար հանգիստ է և հարթ, ինչպէս հայելի, և միայն երբեմն հողմից թեթև կերպով երբվում է:

Հետզհետէ մեծ կղզիների—Կիու—Սիու, Սիկոկֆա և Նիպոն—ափերին մօտենալով նկատվում է մեծ կենդանութիւն: Իւրաքանչիւր քայլում

7049





հանդիպում են նաևեր, շոգենաւեր, չինական առագաստանաւեր, մակոյկներ և շօնգաներ, որոնք լողում են ամեն ուղղութեամբ. յաճախ այստեղ կարելի է տեսնել գեղեցիկ ինքնատեսակ ճապոնական առագաստանաւեր, որոնց վրա սիրում են ուրախ զբօսանքներ կատարել հարուստ ճապոնացիները իրանց հայրենի ափերին մօտ:

Մեծ կղզիների ափերը շատ գեղեցիկ են և գեղանկար: Տախտակամածից երևում են հետզհետէ նորանոր գեղեցիկ տեսարաններ: Մերթ տեսնում ես բարձր կանաչաւէտ լեռներ, մերթ—գեղանկար կիրճեր, լեռնային նեղ անցքեր և տեղ-տեղ էլ արևի տակ փայլող փոքրիկ լճակներ, վառ—կանաչ ափերով: Մի քանի տեղեր, առաւելապէս Նիպօնի վրա, իրանց գեղեցիկութեամբ և գեղանկարութեամբ պակաս չեն կովկասի և Արիմի լաւագոյն տեղերից:

Ճանապարհորդին աւելի ևս զարմացնում է անապատ և անմարդաբնակ տեղերի բացակայութիւնը:

Ընդհակառակն, իւրաքանչիւր քայլափոխում, թէ ծովափին, թէ ահագին լեռների ստորոտներում, թէ նրանց գագաթի վրա կամ նեղ հովիտների խորքում և կամ արագավէժ գետի ափերին հանդիպում ես—բազմաթիւ գիւղերի և շէների, շրջապատուած կանաչով: Արև օրը պայ-

ծառ փայլում են դիւզից գիւղ տանող, դեղին աւազով ծածկուած ոլորապտոյտ խճուղիները:

Ճանապարհորդի առաջին ծանօթութիւնը այս երկրի հետ՝ շրջուցիչ տպաւորութիւն է թողնում:

Դեռ ափ չիջած գէպի նրան են վազում մարդկանց ամբողջ խմբեր, վառ հագնուած, որոնք լծուած են երկանիւանի սայլակների: Այս մարդկանցից իւրաքանչիւրը իր ետևից քաշելով սայլակը, վազում է, բղաւում է, հրում է և ճանապարհը կտրում: Նրանք քաշքշում են ճանապարհորդի ձեռքից, ոտքից, շորից և նախ քան նրա սթափուելը, թէ ինչ է կատարվում իր շուրջը, նրա իրեղէններն արդէն դրուած են սայլակի վրա, իսկ ինքն էլ աննկատելի կերպով նստած է կռօքի վրա, որ քաշում է կարճահասակ և թեթեւաշարժ ճապոնացին:

Այս մարդիկ յայտնի են սյստեղ մարդաձի անունով:

Բանը նրանումն է, որ ճապոնիայում ձի համարեա չը կայ և ի վազուց հետէ սովոր են մարդկանց գործածել ձիերի փոխարէն. փոխադրութեան համար նրանք ուրիշ ձև չը գիտեն:

Այս մարդաձիերը—միաժամանակ թէ կռապան են և ձիեր. կանգնում են փողօցների անկիւններում, գտնվում են ճապոնական օստի-

կանութեան առանձին հսկողութեան ներքոյ և ունեն որոշեալ համարներ:

Նրանք շատ էժան վարձ են վերցնում տեղափոխելու համար և սաստիկ արագ են գնում. — մի ժամում տաս վերստ վազելը անցորդի և նրա բեռի հետ, նրանց համար ոչինչ է, չը նայելով սոթալի արևին, որ կիզում է նրանց մէջքերը և մերկ սրունքները:

Ահա տպաւորութիւնները, որ ստանում է եւրոպացին, առաջին անգամ գալով այս ինքնուրոյն թագաւորութիւնը:

Իր հանդիպած մարդիքն էլ նոյնպէս նրան զարմանք են պատճառում, ինչպէս մարդաձիերը: Առաջին հայեացքից դժուար է որոշել թէ ով է կանգնած իր առաջ, — արամարդ թէ կին, որովհետև նրանք միմեանց սաստիկ նման են թէ արտաքինով, թէ հագուստով: Տարբերութիւնը նրանումն է միայն, որ կանանց խալաթը (կիրիմօն) խայտաճամուկ կտորից է լինում, դօտին լայն է և ծայրը՝ գունաւոր հանգոյցով: Սակայն, շատերն էլ շատ խեղճ են հագնուած: Հագուստի պակասութիւնն այստեղ անվայելութիւն չէ համարվում, և ճապոնացիք յաճախ անձրևի կամ սաստիկ արևի ժամանակ ճանապարհորդում են առանց խալաթի, որպէսզի հագուստը չը փչանայ: Վերջապէս, դուք մտնում էք ճապոնական տուն: Տեսքով նա թվում է խաղալիք, երեսաս-

յական հիմնարկութիւն և շատ յարմարվում է իր ցածրահասակ բնակչին (ճապոնացիները աչքի են ընկնում իրանց ցածր հասակով):

Սովորաբար նա շինած է փայտից, ուռենու ճիւղերից և թղթից և շատ քիչ նմանութիւն ունի մեր բաղաքների տների և գիւղական կոպիտ խրճիթների հետ:

Ճապոնիայում յաճախ են լինում երկրաշարժներ, ուստի և մեծ տները վնասակար են, և ճապոնացիներն էլ սովորել են փոքրիկ, թեթև տներ շինել: Մանաւանդ որ ճապոնիայի տաք կլիման էլ թոյլ չէ տալիս քարէ տներ շինել: Արտաքին ձևով ճապոնական տները շատ օրիգինալ են և ինքնուրոյն, ցածր, յաճախ պարտէզներով և բակերով շրջապատուած:

Ճապոնական տները շունեն ոչ ներքին և ոչ արտաքին պատեր. նրանց փոխարէն գնվում են թղթէ կամ բարակ տախտակէ վանդակաւոր շրջանակներ, որ կարելի է ամեն ժամանակ ծալել կամ բանալ, իսկ ներքին պատերի փոխարէն գործ են ածվում շարժական շիրմաներ և թըղթեայ միջորմներ: Ճապոնական տնակի մէջ ոչ մի կահկարասիք չէք տեսնի:

Սովորաբար ճապոնացիները նստում են ուղղակի յատակի վրա, ոտները ծալած: Այս դրութեան մէջ նրանք աշխատում են, կարդում են, գրում, հանգստանում և ուտում: Պէտք է

նկատել, որ յատակը ամբողջ երկարութեամբ ծածկուած է խտիրով և աչքի է ընկնում իր հիւանալի մաքրութեամբ. մանաւանդ որ ծապոնացիք երբէք կօշիկներով ներս չեն մտնում, այլ միշտ հանում են նրանց արտաքին դռան մօտ: Նրանք քնում են նոյնպէս յատակի վրա, իրանց տակ ձգելով միայն բարակ դեօշակ: Կանայք, բացի դրանից, բարձի փոխարէն գլխի տակ դնում են փայտից մի բան, որպէսզի չը փըշացնեն վարսերի հիւստեամբը: Իսկ նրանց մազահիւսը իրօք որ շատ բարդ է, և երկար ժամանակ ու աշխատանք է հարկաւոր, որ չը փըշանայ: Նոյն իսկ այդպիսի հիւս շինելու համար հարուստները հրաւիրում են առանձին սանդրուզուհիներ:

Ճապոնացին սաստիկ հիւրասէր է. եւրոպացի հիւրին լու պատուելը նրանք պարտականութիւն են համարում և սարքում են մեծ ճաշ ու հրաւիրում շատ հիւրեր: Ճանապարհորդը այդ ժամանակ կը տեսնի ճապոնական շատ սովորութիւններ, որովհետև հիւրին պատուելը ճապոնացու համար փոքր բան չէ, ինչպէս մեզ մօտ:

Հէնց այս տողերը գրողը, օրինակ, ճապոնիա գալով ապրել է հասարակ արհեստաւորի—րամատօյօյի մօտ և ներկայ է եղել մի հանդիսաւոր ճաշի, որին հրաւիրված էին շատ հիւրեր:

Ահա թէ ինչ ծէսերով է կատարվում այս ճաշը \*):

Հիւրերը (միանգամից մեծ բաղմութիւն եկաւ) ներս են մտնում մի տեսակ շինծու անվտախութեամբ, ձեռները դնում ծնկներին և խոնարհ գլուխ տալիս (եթէ նրանք տղամարդիկ են), կամ թէ չօգում են, ճակատը գետնին քըսում (եթէ նրանք կանայք են): Տանտէրերը, զգացուելով հիւրերի այդ յարգանքից, ընդունում են նրանց սիրալիր օղջունով.

— Ծնորհակալ ենք այն մեծ հաճօյքի համար, որ ձեր վերջին տեսակցութիւնը մեզ պատճառեց, ասում են նրանք հիւրերին, խոնարհ գլուխ տալով:

Հիւրերը, դեռ սենեակ չը մտնելով, հնարաւորութեան չափ պատասխանում են աւելի քաղաքավարութեամբ.

— Ձեր ներողամտութիւնն ենք խնդրում մեր կրպտութեան, անկրթութեան և անքաղաքավարութեան համար, որոնցով մենք, երևի, այն ժամանակ վիրաւորեցինք ձեզ, պատասխանում են նրանք, մինչդեռ բոլորովին չեն վիրաւորել և չեն էլ ցանկացել վիրաւորել: Ճապոնացիները այնքան բարեհոգի և քաղաքավարի են, որ այդ անել չեն կարող. բայց այս պատասխանները պա-

\*) Տես «Ճապոնիա և ճապոնացիներ» Գ. Զրէյդէրի գլբբր:

Հանջվում են տեղական սովորութիւնների համեմատ:

Տանտէրը իհարկէ գիտէ, որ հիւրերն այս ասում են քաղաքավարութիւնից դուրսած, բայց և այնպէս նա պարտք է համարում նրանց այս կարծեցեալ յանցանքը իր վրա առնել:

Ուստի նա հիւրերին ընդհատում է բացականչութեամբ.

— Ինչո՞ւ էք դուք այդպէս խօսում, քանի որ ես, ոչ թէ դուք, մեղաւոր եմ նրանով, որ ձեզ արժանի յարգանքը չեմ ցոյց տուել:

— Ի՞նչ էք ասում, ինչ էք ասում, դուք ինձ լաւ ընդունելութեան դաս տուիք:

— Բայց դուք ինչպէս ստորացաք այնքան, որ ձեր այցելութեանը արժանացրիք իմ խղճուկ բնակարանս, շարունակում է տանտէրը, ծովափում իր դէմքը:

— Ընդհակառակը, ես զարմանում եմ ձեր բարութեան և սիրոյ վրա, որ դուք ինձ նման մի ոչինչ մարդուն ընդունում էք ձեր տան մէջ, պատասխանում է հիւրը:

Սրանով վերջանում են ողջունելու ձևերը: Եւրոպացին էլ ակամայից ստիպուած է լինում վերոյիշեալ ձևականութիւնը գործ դնել:

Այս խօսակցութիւնից յետոյ հիւրերը հանում են կոշիկները և մտնելով սենեակ, նստոտում են յատակի վրա ու սպասում ճաշին:

Ճապոնացիները սովորական կերակուրը շատ պարզ է: Փոքր ինչ եփած բրինձ, կանաչի, մի կտոր չորացրած ձուկ— ահա բոլորը, որով կերակրւում է ճապոնական ժողովուրդը հասարակ օրերին: Բայց հանգիստւոր օրերին ճապոնացու սեղանը անհամեմատ ճոխ է: Այդ ժամանակ փոքրիկ յախճապակեայ գաւաթներով մատուցանում են մի քանի տեսակ արգանակ, շատ տեսակ եփած ձուկ, լեղակի արմատներ, ծովային կաղամբ, և այլն, ընդամենը մօտ տասն և հինգ տեսակ: Փղալ, դանակ և պատառաքաղ չեն տըրվում, որովհետև ճապոնացիներին անծանօթ է դրանց գործածութիւնը: Դրանց փոխարէն իւրաքանչիւր մարդ գօտու միջից հանում է մի զոյգ բարակ, յղկած կոլոր փայտիկներ և դրանցով ուտում: Վերջապէս, ճաշից յետոյ մատուցանվում է նրբահամ ծխախոտ, որ ծխում են տղամարդիկ, կանայք և երեխաները, և բրնձից քաշած օղի— «սակէ»:

Սակէն թունդ խմիչք է, որ ճապոնացիները շատ են սիրում:

Սակայն չէ եղել դէպք, որ ճապոնացին դրանով հարբէր: Եւ եթէ դրանով որ և է մէկը գործէ այդպիսի յանցանք, դուք նրան չէք տեսնի փողոցում:

Այդպիսի վարմունքը նրա անունը կատարացնէր երկար ժամանակ: Ճապոնացին միշտ յի-

շում է այդ և ճանաչում է չափը: Ճապոնացիները սաստիկ ինքնասէր են և թանգ են զնահատում իրանց բարի անունը:

Ճաշից յետոյ նոյնպիսի փոքրիկ գաւաթներով մատուցանվում է թէյ, իսկում են առանց շաքարի, և երբեմն բիսկուիտով կամ սառը շաքարով: Թէյը պատրաստում է տանտիկինը կամ աղջիկը, հէնց այստեղ հիւրերի առաջ:

Թէյ պատրաստելու և մատուցանելու համար կան որոշեալ ձևականութիւններ— մի առանձին գիտութիւն, որ կոչվում է «թէյի ծէս»: Առաջուայ ժամանակները ճապոնիայում կային մինչև անգամ առանձին պաշտօնեաներ, որոնք պարտաւոր էին հսկել թէյ պատրաստելու վրա: Հէնց նրանք մի առանձին ձեռնարկ կազմեցին ճապոնական կանանց համար. այս օրէնքը գոյութիւն ունի մինչև այժմ: Սովորաբար իւրաքանչիւր աղջկան, մանուկ հասակից սովորեցնում են թէյի ծիսակատարութիւնը: Նա պարտաւոր է այդ գիտենալ այնպէս, ինչպէս գրագիտութիւնը: Այլպէս, ինչպէս ասում են ճապոնացիք, նրա կըրթութիւնը թերի է:

Պէտք է այն էլ ասել, որ եւրոպացին իրան բոլորովին լաւ և ազատ է զգում ճապոնական ընտանիքի մէջ, նոյն իսկ հիւրեր եղած դէպքում: Ճապոնացիները սաստիկ հիւրընկալ են, ուրախ են ամեն մի հիւրի գալուն, և ուրախ են իւրա-

քանչիւր օտարերկրացուն ցոյց տալով և ծանօթացնելով իրանց սովորութիւնների հետ: Եւ նըրանք այս բոլորն անում են այնպիսի սիրով, որ եւրոպացուն դուր է գալիս այնտեղ հիւր մնալը: Եւրոպացին, ի հարկէ, չը գիտէ տեղական բոլոր սովորութիւնները, և երբեմն նա հակառակ է վարվում: Բայց ճապոնացիները այս բանին վերաբերվում են բարեսրտօրէն և զիջողաբար կատակ են անում հիւրի հետ: Թէև նրանք սուրբ են համարում իրանց բոլոր սովորութիւնները, սաստիկ պահպանում են իրանց ծէսերը, շատ անգամ ծիծաղելի, բայց և այնպէս նրանք անում են այդ առանց ֆանատիկոսութեան և կեղծ բարեպաշտութեան: Նրանք անում են այդ միայն նրա համար, որ շատ են սիրում ձեւականութիւններ և հանդիսաւոր ծիսակատարութիւններ: Նրանք այդ բաներով հրճվում են, ինչպէս մանուկներ:

Ահա թէ ինչու նրանք ամենևին հոգս չեն տանում պատուաստել ուրիշներին իրանց սովորութիւնները և, ընդհակառակը, իրանք հաճոյքով ընդունում են ամեն մի նորմութիւն, հին կարգերի ամեն մի փոփոխութիւն, եթէ նրանք դրամէջ տեսնում են որևէ մի օգուտ իրանց համար ներկայում կամ ապագայում:

III.

ՃԱՊՈՆԱՅՈՒ ՄՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ  
ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԸ:

Ճապոնացիների մէջ ապրելը շատ հետաքրքրութիւն է ներկայացնում եւրոպացու համար: Ոչ մի տեղ նա այնքան շուտ չէ կարող շփուել տեղական զգգաբնակութեան հետ, ինչպէս այստեղ, Ճապոնիայում: Մանաւանդ որ նրա շրջապատը, բնութիւնը, կլիման, և իրանք՝ նոր հարեանները շատ հրապուրիչ կողմեր ունեն: Մի երկու շաբաթուայ օտարերկրացին այնքան է մտերմանում այստեղ, որ մեծ դժուարութեամբ է բաժանվում իր նոր բարեկամներից: Այս բանը փորձել են անձամբ այս երկիրն այցելող շատ ճանապարհորդներ:

Ճապոնացու կեանքը սովորաբար անցնում է գործունեայ, եռանդուն և քրտնափաստակ աշխատանքի մէջ: Ազգաբնակութեան մեծամասնութիւնը հայը դժուարութեամբ է ձեռք բերում:

Երկրի խորքերում կան աղբաւաններ, որոնք չեն կարողանում ձեռք բերել նոյն իսկ մի ֆունտ բրինձ, որ ընդամենը արժէ կէս կոպէկ: Այս մարդիկ կերակրվում են արմատներով և խոտերով, և նըրանց օրական աշխատանքը գնահատվում է 10—15 կոպէկ: Գործարաններում սովորաբար աշխատում են օրական 14—16 ժամ անընդհատ: Երկրագործութիւնն այստեղ այնպիսի տոկուն աշխատանք, ժամանակ և հոգաատարութիւն է պահանջում, որ մի ուրիշը, բացի ճապոնացուց, աշխարհիս ոչ մի վայելքի համար էլ չէր պարապի այդ գործով:

Եւ սակայն, պէտք է տեսնել, թէ ինչպիսի սիրով, ինչպիսի եռանդով և հոգածութեամբ են վերաբերվում ճապոնացիները իրանց նոյն իսկ ամենածանր գործին: Նայելով ճապոնացու գործի մաքրութեանը, օրինակելի—ճաշակաւորութեանը, ակամայից կը դարձանաք ճապոնացու անսովոր ճարպիկութեան, հմտութեան, բարեխղճութեան և բազմակողմանի տաղանդի վրա: Նըրանցից իւրաքանչիւրը աշխատելով որեւէ գործի վրա, լինի սա թէկուզ կեղտոտ և տաղտկալի գործ, բանում է այնպիսի սիրով և հոգատարութեամբ, ինչպէս որ մի մեծ նկարիչ նկարում է մի պատկեր, որ պէտք է յաւիտեան փառաւորէ իրան:

Ճապոնացիների նման աշխատել քչերը կարող են: Այդ պատճառով նրանց շինած առար-

կաները, իրանց դիմացկանութեամբ և ճաշակաւորութեամբ, մեծ հռչակ են վայելում քաղաքակիրթ աշխարհում:

Եւ իրօք, շատ բան կայ սովորելու ճապոնացուց և այդ մասին համաձայն են բոլորը, նոյն իսկ նրանք, որոնք շատ էլ բարեկամաբար չեն վերաբերվում նրանց: Զարմանալի չէ ուրեմն, որ նոյն իսկ ճապոնացիների քաղաքական հակառակորդները, նրանց մօտ ապրելով կարճ կամ երկար ժամանակ, իրանց թշնամութիւնը փոխում են համակրանքի, և նրանք լցվում են մի տեսակ յարգանքով դէպի այս անօրինակ աշխատասէր ժողովուրդը:

Օրինակ, հարկաւոր է միայն տեսնել, թէ նրանք ինչպէս են յարգարում իրանց ընտանեկան օջախը: Իւրաքանչիւր ճապոնացու անակիտ մօտ, նոյն իսկ խեղճ մարդու, պարտաւորաբար կայ մի պարտէզ, — աւելի շուտ խաղալիքի նման, քան իսկական: Ընտանեկանները սաստիկ սիրում են բնութիւնը և բուսականութիւնը, և ամբողջ երկրում, նոյն իսկ աղքատ կողմերում, դուք չէք տեսնի մի տնակ, որի առաջ չը լինէր մի փոքրիկ պարտէզ:

Այս պարտէզներում սովորաբար տնկում են լայնատերև արմաւենիներ, ստուերախիտ չինարներ, երկարացող եղեգն, զանազան թուփեր և խայտաճամուկ ծաղիկներ: Եւ երբեմն, երբ ճա-

պոնացին հող քիչ ունի պարտէզ չինելու համար, մարդ զարմանում է նրա այն ահագին աշխատանքի, եռանդի, հնարագիտութեան վրա, որ գործ է դնում իր փափազը իրականացնելու:

Հողի բաժինը երբեմն լինում է մի քանի քառակուսի սաժէն, բայց և այնպէս ինչեր չէք գտնի դուք այդ փոքրիկ տարածութեան վրա: Այստեղ կայ և քարայր, և ջրանցք, օդային կամուրջ, սաղարթածածկ շաւիղներ, և նոյն իսկ փոքրիկ շատրուան: Այս բոլորը փոքր չափով է, բայց հաճելի, գեղեցիկ, ճաշակաւոր, թէև բոլորովին նրման չէ եւրոպական Ռուսաստանում եղող մեծ այգիներին, որոնք մի քանի դեսեսատին տարածութիւն են ունենում:

Ընտանիայում, մանաւանդ քաղաքների մէջ հողը սաստիկ թանգ է: Ընտանեկանները երբեմն բաւականանում են այնպիսի փոքրիկ բակերով, ուր մեզ մօտ մի զոյգ եգներով թուած սայլը հազիւ կարող է շարժուել: Եւ ահա այսպիսի մի շնչին տարածութեան վրա ճապոնացիները խելացի կերպով չինում են թէ իրանց փոքրիկ տնակները, թէ անտեսական շինութիւնները, թէ լճակներ և պարտէզներ, և շատրուաններ:

Ընտանեկանները միայն իրանց աշխատանքի զարմանալի ընդունակութեամբն չէ որ գրաւում են օտարերկրացիներին: Սակաւ ուշագրաւ չէ նրանց բարեկրթութիւնը, ժուժկալ վարքը, ներո-

դամութիւնը դէպի օտարի կարծիքներն ու սփորութիւնները, և առաւելապէս նկատելի է նըրանց ուրախ, անկեղծ ժպիտը, որ երբէք չէ հեռանում նրանց երեսից:

Բարեկրթութիւն և քաղաքակրթութիւն— սրանք ճապոնացու բնական յատկութիւններն են. անամօթութիւն դուք երբէք չէք նկատի: Նոյն իսկ ճապոներէն լեզուով հայհոյական բառեր չը կան: Ամենամեծ հայհոյանքը— մէկին «կրիայ» կոչելն է:

Ճապոնացու գերակշռող գծերից մէկն է սէրը առ հայրենիքը: Ճապոնացին սիրում է իր հայրենիքը սաստիկ, անձնագոհ կերպով և պատրաստ է նրա բարօրութեան և փրկութեան համար ամեն տեսակ զրկանք և զոհաբերութիւն յանձն առնել: Այս բանում նա նոյն իսկ հասնում է խելացնոր անվեհերութեան և հերոսութեան:

Այդպիսի ջերմ սիրով նա սիրում է նաև իր ընտանիքը ու օջախը: Շատ հազուադիւտ է զբաւնել այնպիսի համաձայնութիւն, որպիսին տիրում է ճապոնական ընտանիքում: Անօրինակ երևոյթ է, որ տղամարդը ծեծ է կնոջը կամ երեխաներին: Այս բանը այնքան հակառակ է ճապոնացու հիմնական սրակութիւններին, որ եթէ նրանից մինը կամենա, բռունցքով յարգանք ներշնչել տալ դէպի իրան, բոլոր ցեղապետները յայտնապէս արհամարհանք ցոյց կը տան նրան:

Կանայք ճապոնիայում մեծ ազատութիւն են վայելում. նրանց դրութիւնը անհամեմատ աւելի լաւ է, քան ասիական և մահմեդական երկրներում: Ամուսնացած կինն այստեղ ներկայանում է իբր ամուսնու օգնական և խորհրդատու լայն մտքով, թէև, առ երևոյթս, ի յարգանս ընտանիքի պետին և հին սովորութիւններին, նա որպէս թէ երկրորդական տեղ է բռնում:

Այստեղ ի միջի այլոց կայ մի ինքնուրոյն սովորութիւն, որ ամենից լաւ բնորոշում է կնոջ յարաբերութիւնը դէպի իր ընտանիքը և օջախը: Երբ ճապոնացի աղջիկը մարդու է գնում, հէնց հետևեալ օրը նա ածիլում է կամ փետտում իր յօնքերը և ատամներին սև ներկ քսում:

Սրանով նա մի կերպ հասկացնում է, որ այս օրուանից արդէն նա ցանկութիւն չունի ոչ ոքի դուր գալու, բացի ամուսնուց, և ոչնչով չէ հետաքրքրվում, բացի ընտանեկան օջախից: Ճիշդ է, որ այս սովորութեան շնորհիւ ճապոնացի կանանց մեծամասնութիւնը տգեղ տեսք ունի, բայց միւս կողմից նա ապացուցանում է, որ կինը ընդունակ է մեծ անձնագոհութիւն անելու:

Այս սովորութիւնը աւելի ևս յարգանք է ներշնչում դէպի ճապոնուհին, եթէ ի նկատի ունենանք, որ մինչև ամուսնանալը նա սաստիկ մտածում է իր արտաքինի մասին. — ներկվում է, քրսվում է և ձեռքից բաց չէ թողնում սնգոյրի տուփը:



Ի դէպ է նկատել, որ ճապոնացի աղջիկներըն էլ մեծ ազատութիւն են վայելում: Նրանցից իւրաքանչիւրը նախ և առաջ պէտք է կրթութիւն ստանայ: Նրանք բոլորն էլ գիտեն կարգալ, գրել, տնային ձեռագործներ, նուազել ազգային նուագարանների վրա, գիտեն թէյի ծիսակատարութիւնը ամենայն նրբութեամբ և այլն: Նրանք այս ամենը սովորում են տարրական ուսումնարանում:

Հարուստների աղջիկների կրթութիւնը սրանով չէ վերջանում: Ճապոնիայի իւրաքանչիւր քաղաքում կան միջին (մեր գիմնազիաներին հաւասար) և մասնագիտական դպրոցներ, կանայք օգտվում են հաւասար իրաւունքներով տղամարդկանց հետ այդ դպրոցներում: Այս պատճառով Ճապոնիայում օրիորդներին կարելի է տեսնել ոչ միայն միջնակարգ դպրոցներում, այլ և ճապոնական միակ համալսարանում, որ գտնվում է Տօկիօում:

Կին-ճարտարապետ, կին-փաստաբան, կին-բժիշկ և այլն, հազուադիւս չէ տեսնել այստեղ, ինչպէս և Ամերիկայում:

Ճապոնիայում միակ տխուր երևոյթը—աղջիկների վաղաժամ ամուսնացնելն է: Ճապոնական ցեղի կարճ հասակը, կանանց (ինչպէս և տղղամարդկանց) վաղաժամ թառամելը այդ վաղաժամ ամուսնութեան անմիջական հետևանքներն

են. 30 տարեկան հասակում ճապոնուհին արդէն ծեր է թւում: Վաղաժամ ամուսնութիւնները երբեմն աւելի վատ հետևանքներ են արտադրում: Ճապոնացի աղջիկը դեռ մանուկ հասակում մարդու է գնում, հնազանդութիւնով իր ծնողների կամքին: Թէև նրանք չեն ստիպում նրան ուժով և նրա հետ խիստ վարուելով, որովհետև ծնողական իշխանութիւնը այստեղ այնքան խիստ չէ, բայց այդ բացատրվում է նրանով, որ Ճապոնիայում ծնողներին հնազանդութիւններից ամենամեծն է համարվում: Այդ պատճառով աղջիկ մարդու տալու ժամանակ ծնողները ստիպուած չեն լինում խիստ միջոցների դիմել:

Բացի դրանից, յաճախ ամուսնութիւնը կատարվում է երկուստեք համաձայնութեամբ, և ծնողները արգելք չեն հանդիսանում դրան: Սակայն լինում են դէպքեր, և բաւական յաճախ, որ ամուսնանալուց յետոյ ամուսինները հիասթափվում են միմեանցից: Ճապոնական կարգերը թոյլ են տալիս այս դրութիւնից ազատուելու յարմար միջոց, և չեն ստիպում ամուսիններին մինչև մահ շարունակել իրանց անտանելի ամուսնական կեանքը, Այդպիսի դէպքերում կարելի է ապահարգան, որի համար հարկաւոր չեն ձեւականութիւններ, առաւելապէս ազգաբնակութեան ստորին խաւերում: Բաւական է միայն մի զե-

կուցագիր ներկայացնել ոստիկանութեան, որից յետոյ ամուսնութիւնը լուծված է համարվում:

Բայց միւս կողմից այն բոլոր ժամանակ, երբ ամուսինները ամուսնական կեանք են վարում, նրանք սաստիկ հաւատարիմ են մնում միմեանց: Ճապոնացի կնոջ հաւատարմութիւնը նոյն իսկ առած է դարձել:



IV.

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԳԻԻՂԸ.—ԲՆՈՒԹԵԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻԻՆ-  
ՆԵՐԸ.—ՃԱՊՈՆԱՑԻՆԵՐԻ ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻԻՆԸ:

Ճապոնիան—մանր գիւղական հողատիրութեան և մանր անայնական արդիւնագործութեան երկիր է: Երկրի 40 միլիոն ազգաբնակչութեան կիսից աւելին պարապում է երկրագործութեամբ: Միաժամանակ Ճապոնիան լեռների, անտառների և կիրճերի երկիր է: Մարդագետիները և գաշտեր ամենեկին չը կան:

Եւրոպացու վրա Ճապոնիան շատ տարօրինակ տպաւորութիւն է գործում: Մտնելով ճապոնական գիւղ, եւրոպացին ոչ մի բան չէ տեսնում՝ Եւրոպայում իր տեսած բաների նման: Ամենից առաջ նա համոզվում է, որ այստեղ ահագին անտեսութիւնը կատարվում է առանց անասունների օգնութեան: «Ճապոնացի գիւղացու բակում, ասում է ճանապարհորդ պրոֆէսոր Կրասնոփը,— դուք չէք տեսնի, ոչ փարախ, ոչ մուր: Ճապո-

նական գիւղում դուք չէք լսի ոչ ձիերի խրինջոց  
և ոչ կովերի բառաչ: Աքաղաղի կանչը միայն կը  
յիշեցնէ ձեզ, որ դուք գիւղում էք գտնվում:  
Այստեղ չը կան սովորական կճուճներ և խնոց-  
ներ, խոտերի խուրձեր և յարգի դէղեր ու աղբի  
կոյտեր, որոնց մէջ քչփորում է խողը»: Իրօք, այս-  
տեղ ամեն ինչ կատարվում է մարդի ձեռքով,  
և ամեն բանի համար պատասխանատու է մար-  
դը, որ սովորել է հնարաւոր եղածին չափ կըր-  
ճատել իր կարիքները. այսպէս օրինակ, նա  
12—15 կոպէկի համար մեծ ուրախութեամբ  
յանձն կառնէ մի օրուայ ամենածանր աշխա-  
տանք:

Սակայն, չը նայելով որ ճապոնիան հակա-  
ռակ եւրոպական երկիրների, համարեա չէ բա-  
նեցնում տնային կենդանիներ և մինչև ցարդ էլ  
չէ իմանում մօի, կաթի դորձածութիւնը. — այ-  
նուամենայնիւ այս երկիրը բաղաբաղիթ աշ-  
խարհներից ոչ մի բանով պակաս չէ առաջացել  
արդիւնազօրութեան, վաճառականութեան և  
գիտութեան ասպարէզներում: Եւ այս բացատըր-  
վում է նրանով, որ շնորհիւ երկրի վերոյիշեալ  
առանձնայատկութիւններին, ճապոնացին ցեղից  
ցեղ, մանկական հասակից սկսած, սովորում է  
անխոնջ, անընդհատ, եռանդուն աշխատանքի,  
իր գոյութիւնը պահելու համար:

Մշակութեան յարմար հողի սակաւութեան

պատճառով, ճապոնիայում գիւղական հողաբա-  
ժինները շատ փոքր են. բնական է, որ ճապոնա-  
ցի գիւղացին այս պայմաններում ձգտում է ա-  
ւելի շատ եկամուտ ստանալ իր մշակած փոքրիկ  
հողից: Առաւել ևս, շնորհիւ կլիմայական և հո-  
ղային պայմանների, նա ստիպուած է աշխատել  
ոչ միայն հողի, այլ և բոյսի վրա: ճապոնիայի  
հողը, նայն ճանապարհորդի ասելով, ծառայում է  
աւելի պնդացնելու բոյսի արմատները, իսկ բոյ-  
սը ճապոնացին պարարտացնում և ջրում է պա-  
րարտացման բարդ սիստեմով: Իւրաքանչիւր բոյս  
պահանջում է առանձին պարարտացումն. հացա-  
բոյսերի ամեն մի պարարտացումից յետոյ, հար-  
կաւոր է լինում դարձեալ պարարտացնել հողը և  
բացի դրանից, ամեն մի բոյս աճման ժամանակ  
պարարտացնում են մի քանի անգամ: Չը նայե-  
լով այդ հողաբաժնի ահագին աշխատութեան, ճա-  
պոնացին ամբողջ տարին աշխատում է, ինչպէս  
բզէզ, և նրան աջողվում է գրեթէ բարեկեցու-  
թիւն ձեռք բերել և յամենայն դէպս ապրել  
ոչ—աղքատ:

ճապոնացի գիւղացին հանգստեան մեծ ժա-  
մանակամիջոց չունի, ինչպէս ուրաք. նա չը գիտէ  
նոյն իսկ ուստական ամառային հանգիստը: Նա  
ամբողջ տարին միակերպ եռանդով է աշխատում:  
Նրա փոքրիկ հողի վրա միշտ աշխատելու գործ  
կայ իր համար: Նա միայն հանգստանում է ա-

ժառը, երբ բնութիւնը նրա փոխարէն գործում է։  
 Բաւական է միայն նայել ճապոնական գիւղի  
 շուրջը գտնուող դաշտերի վրա՝ համոզուելու հա-  
 մար, թէ որքան շատ աշխատանք է գործ դնում  
 ճապոնացի գիւղացին։

Մի ճանապարհորդի խելացի նկատողութեան  
 համաձայն, այս երկիրը յիշեցնում է կամ որևէ  
 մի երկրագործական ֆիրմայի փորձագատ, որ-  
 տեղ միմեանց ետեւից ձգուած են զանազան բոյ-  
 սերի ցանքսեր կամ բուսաբանական, և կամ պլու-  
 դաւէտ այգի, որ գտնվում է մի գեղեցիկ լեռ-  
 նոտ տեղում։ Այստեղ չը կան այն բազմազան  
 տարածութիւնները, որոնք մի քանի տասնեակ  
 վերստ երկարութեամբ ցանուած են նոյնատեսակ  
 բոյսերով, ինչպէս լինում են Ռուսաստանում։  
 Սակայն աշխարհում չը կայ մի երկիր, որտեղ  
 բուսականութիւնը այնքան բազմազան լինէր, ինչ-  
 պէս Ճապոնիայում։ Միայն ուտելու բանջարեղէն-  
 ներ այստեղ մշակվում են մօտ 430 տեսակ։ Ուս-  
 տի զարմանալի չէ լսել ճապոնացուց, որ այստեղ  
 բոյսերը կերակրում են, լուսաւորում և հագցը-  
 նում մարդուն։ Իրօք, ճապոնացին չը դիտէ ոչ  
 միս, ոչ հաց, ոչ կաթ, ոչ բուրդ, ոչ կաշի. բայց  
 նա ամենեւին վրաս չէ կրում դրանից։ Նա բու-  
 սեղէններից աւելի բազմատեսակ ուտելիքներ է  
 ստանում, քան մենք, նոյն բոյսերիցն է նա ստա-  
 նում նաև իւղ, ճարպ, մոմ և սօսինձ։ Եւ այս

ամենը ունի նա այն պատճառով, որ առաւօտից  
 մինչև երեկոյ աշխատում է։

Ճապոնացիները շատ ճիշդ են նկատել, որ  
 հէնց բոյսերի հետախոյզ մշակումը ճապոնացուն  
 դարձրել է աշխատասէր և մանրակրկիտ.—նա  
 թանգ չէ գնահատում իր աշխատանքը, ժամա-  
 նակը և փողը, ինչպէս չինացին։ Նա երբեմն կա-  
 րող է ամբողջ շաբաթներ կորցնել մի չնչին բա-  
 նի վրա։ Եւ այս բացատրվում է նրանով միայն,  
 որ նա իւրաքանչիւր գործի վրա նայում է գեղ-  
 արուեստագէտի աչքով, և որ այս աշխատանքը  
 նրան մեծ հաճոյք է պատճառում։

Բաւական է ասել միայն, որ ճապոնական  
 ամենայետին գիւղը ներկայացնում է մի գեղե-  
 ցիկ ամարանոց։ Ճապոնական գիւղի փողոցում  
 դուք երբէք չէք տեսնի ոչ ցեխ, ոչ աղբ և ոչ  
 կեղտոտութիւն։

Այս բանը զարմանալի չէ. փոքր հասակից  
 ճապոնացին, ապրելով գեղեցիկ բնութեան ծո-  
 ցում, սովորել է բմբունել գեղեցիկը և հետևել  
 նրան։ Իւրաքանչիւր տան առաջ գտնվող պար-  
 տաւորական պարտէզը աչքի է բնկնում մաքրու-  
 թեամբ և ճաշակով։ Փողոցները ներկայացնում  
 են չքեղ խճուղիներ, ծառերով տնկուած. նրա  
 մանրանկար դաշտերը շրջապատուած են ծաղիկ-  
 ներով և գեղեցիկ ծառերով ու հիանալի այգի-  
 ների տեսք ունեն։ Ճապոնական իւրաքանչիւր

տնակ, իւրաքանչիւր գիւղ նման է պատկերի, որ դրուած է՝ ծառերից, թփերից ու ծաղիկներից շինած շրջանակի մէջ:

Հիմք կայ կարծելու, որ բոյսերի մէջ անցկացրած մշտական կեանքը, անխոնջ, խնամկոտ և քնքուշ հոգատարութիւնը նրանց մասին հանգիստանում են ճապոնացի ժողովրդի մէջ այնքան տարածուած քաղաքավարութեան և փափկանկատութեան գլխաւոր պատճառը:

Ճապոնիայում դուք փողոցներում երբէք չէք տեսնի հարբած մարդ. դուք այնտեղ չէք լսի հայհոյանք, չէք տեսնի կռիւ և այլ փողոցային անկարգութիւններ: Այս բանով ճապոնացիները բոլոր միւս ազգերից աւելի գրաւիչ են: Սակայն, ճապոնացին այդ դէպքերում միայն իր երկրի ցոլացումն է. նրա հայրենիքը արդարև աչքի է ընկնում իր արտակարգ գեղեցկութեամբ: Ահա թէ ինչպէս է նկարագրում իր տպաւորութիւնները այդ երկրի մասին մի ուսու ճանապարհորդ, որ դիտել է Փուդժի-Նամի լեռան գագաթից, որտեղից շրջակայքը երևում է 200 վերստ տարածութեան վրա:

«Իժուար է երևակայել աւելի գեղեցիկ և վեհապանձ պատկեր, քան Փուդժի-Նամի սարի գագաթից երևացող տեսարանը: Տասը հազար տոնաչափ բարձրութեան վրա դուք մտնում էք արդէն ամպերի շրջանը: Յաճախ ամպերը կազ-

մում են երկու գօտի, և նրանց մէջ տեղում գըտնուելով, ամպ կամ մառախուղ ունենալով ուների տակ և գլխի վրա, դուք ձեզ երևակայում էք տիեզերքի քաօսում, տիեզերքի ստեղծագործութեան առաջին րոպէում: Բայց ահա ցրտի և առաւօտեան կիսախաւարի մէջ դուք հասնում էք գագաթին: Հետզհետէ մառախուղը ցրվում է, և դուք սկսում էք տեսնել հեռվում ցամաքը: Հորիզոնն սկսում է հետզհետէ լուսաւորվել: Մառախուղը հալվում է և դուք աւելի պարզ կերպով որոշում էք ծովի ու ցամաքի գծագրութիւնը, լեռները և գօտիները: Վերջապէս երևում են լեռների մէջ ձգուած փայլուն լճերը. առաւօտեան թոյլ աղջամուղջի միջից դուք նկատում էք անտառներ, դաշտեր և գիւղեր: Կարծես դուք ներկայ էք աշխարհիս ստեղծագործութեան պատկերին, երբ քաօսի միջից ձեր ոտների տակ ստեղծվում է մի հիասքանչ երկիր, անհուն ծովով շրջապատուած: Եւ ահա այդ ծովի վրա, մութ-կապոյտ եթերի վրա, որ բռնկվում է ճառագայթներով, գունաւորվում են ամպերը, առաջ ծիրանեգոյն, յետոյ քնքոյշ-վարդագոյն: Աւելի հեռաւոր ամպերը, որոնք կախ են ընկած սարերի վրա, թւում են իբր սպիտակ բամբակի կտորներ: Ամպերը հետզհետէ ոսկեգօծվում են: Եւ յանկարծ երևում է արևի վերջին մասը: Մի քանի րոպէում երկիրը անձանանչելի է դառնում:

Ոտքերի տակ երկիրը փայլում է լճերի հայելիներով, լեռների, սարահարթերի վրա ընկած անտառներով, դաշտերի դիւղահրաշ ձևերով և արծաթագոծ գետերի արտացօլումով: Մի խօսքով դուք այստեղից թռուցիկ կերպով տեսնում եք աշխարհիս հիանալի երկիրներից մինը...»:

Լիակատար իրաւունքով կարելի է անուանել ճապոնիան «հազարաւոր կղզիների երկիր»: Նըրանցից գլխաւորներն են—Նիպօն, Եսսօ, Միկօկֆ և Կիու-Սիու, իսկ մնացեալներն այնքան մանր են, որ նոյն իսկ քարտէզի վրա չեն նկարած, և յայտնի են միայն ճապոնացիներին: Բազմաթիւ կղզիների և կտրտուած եզերքների շնորհիւ այս երկիրը բարձր տեղից թւում է մի ֆանտաստիկական տեսարան: Գիտողին թւում է, թէ իր առաջ տեսնում է ոչ թէ կոշա հող, այլ ընդարձակ ծով, վերածուած լեռնահովիտների, որոնք ծովի միջից բարձրացած են խիտ անտառներով ու կանաչով պատած բլուրներով: Եւ ով գիտէ, գուցէ ովկիանոսի ալիքները վաղուց հարթէին այս փոքրիկ կղզիները, հետզհետէ մաշելով նըրանց ափերը, եթէ ջրի կործանիչ ոյժի դէմ չը լինէր ստորերկրեայ կրակը:

Բանը նրանում է, որ կարծես, աշխարհումս չը կայ ուրիշ մի երկիր, որ ծածկուած լինէր ժայթքող հրաբուխների այնքան ընդարձակ ցանցով և որը այնպէս անընդհատ ցնցուէր երկրա-

շարժների ազդեցութիւնից, ինչպէս ճապոնիան: Այստեղ երկիրը շատ յաճախ է ցնցվում: Երկրաշարժը ճապոնացիների համար այնքան սովորական երևոյթ է, ինչպէս մեզ մօտ ձիւնն ու անձրևը: Ջրհեղեղները և հրգեհնէրը, որոնք այնքան յաճախական աղէտներ են մեզ մօտ, այնուամենայնիւ աւելի քիչ են պատահում, քան երկրաշարժը ճապոնիայում: Արևմտեան Եւրոպայում և Ռուսաստանում օդերևութաբանական կայարանները ամեն օր կամ շաբաթ նախադիտում են եղանակը, իսկ ճապոնիայում համարեա իւրաքանչիւր մեծ համայնքում կայ, այսպէս կոչուած սէյսմօլոգիական կայարան, որ կազմում է գուշակութիւններ երկրաշարժի մասին: Թէ որքան յաճախ է նա պատահում, երևում է նրանից, որ, օրինակ 1889 թ., մի տարուայ ընթացքում, ճապոնիայում հազար երկրաշարժից աւելի է եղել: Իսկ թէ նա որքան զօրեղ է, երևում է նրանից, որ մի անգամ ստորերկրեայ մի հարուած կործանեց Օսակու քաղաքը, որ մի միլիօնից աւելի բնակիչ ունէր:

Իրանց երկրի այս առանձնայատկութիւնների շնորհիւ ճապոնացիները ստիպուած էին հնարել բնակարանների այնպիսի մի ձև, որ ապահովացնէ իրանց՝ յաճախ պատահող երկրաշարժների կործանումից: Այսպէս, նրանք տները շինում են ոչ թէ բարից կամ աղիւսից, այլ փայ-

տից, և այն ևս մի յարկանի: Բացի դրանից, իրանց տների գլխաւոր խարխախների հիմքերում և նրանց մէջ տեղ նրանք դնում են կապարի խոշոր կտորներ, որպէսզի տները հարկ եղած գէպքում ճօճուեն ամեն կողմ: Այս պատճառով էլ նրանց տները նմանում են խաղալիքների, և երբ դուք խիստ քամու ժամանակ գտնուէք ճապոնական գիւղում և տեսնէք այս ճօճուող տները, ձեզ կը թուայ, թէ դրանք շինուած են զսպանակների վրա:

Ճապոնիայի բնութեան հրաշալի պատկերը, բնակիչների օրինակելի աշխատասիրութիւնը, նրանց զարմանալի ընդունակութիւնը—իւրաքանչիւր անպէտք իրից օգուտ քաղելը, —նրանց հրապուրիչ գիմագիծը, հայրենիքի սէրը, նրանց կենսուրախ տեսքը, որի պատճառով և նրանց հայրենիքը կոչվում է «ժպտացող մանուկների երկիր» կամ «ուրախ երազների թագաւորութիւն», նրանց քաղաքավարութիւնը և փափկանկատութիւնը, ինքնուրոյն բարքերը և օրիգինալ սովորութիւնները, —այս բոլորը սաստիկ հիացնում են առաջին եկողին: Բայց որ ամենից զարմանալին է, այդ այն է, որ 30 տարի առաջ օտարերկրացիների հետ յարաբերութիւն ունենալը յանցանք համարող ճապոնացիները ներկայումս արգէն կարողացել են փոխ առնել նրանցից այն ամենը, ինչ որ նրանց տուել է գիտութիւնը: Բոլոր նորագոյն

գիւտերը և կատարելագործութիւնները, որոնք մեզ մօտ դեռ մատչելի են միայն հարուստ մարդկանց, ճապոնիայում դարձել են ընդհանուրի սեպհականութիւն: Եւ այսպէս է ոչ միայն մեծ քաղաքներում, այլ և այնպիսի հեռաւոր գիւղերում, որտեղ դեռ եւրօպացին ոտք չէ դրել:

Ճանապարհորդ պրօֆէսօր Կրասնօվի ասելով, ոչ միայն ուսմաները, այլ և ամերիկացիները զարմանում են, տեսնելով գիւղերում կանթեղների փոխարէն՝ ելեքտրական ճրագ, որ լուսաւորում է գիւղացու խրճիթը: Հանգանակութեամբ դնում են փոքրիկ դինամօ—մեքենայ, որի գինը 300 ռուբլուց աւել չէ լինում, որովհետեւ պատրաստվում է իրան՝ ճապոնիայի մէջ տնայնագործական կերպով. նրան շարժելու համար օգտվում են սարից հոսող վտակի ոյժից, և գիւղը ունի լուսաւորութիւն, որի մասին դեռ Ռուսաստանի շատ մեծ քաղաքները չեն էլ մտածում: Ինչ որ Եւրօպայում կամ մեզանում թանգ է, ճապոնացիները շտապում են էժանացնել և տարածել ժողովրդի մէջ: Թանգագին քիմիական կշեռք, վիրաբուժական գործիքներ, ֆիզիքական գործիքներ, որոնց համար մենք Ռուսաստանում վճարում ենք հազարաւոր ռուբլիներ արտասահմանեան արհեստագէտներին, նրանք իրանք են շինում. զարմանալի չէ ուրեմն, որ ճապոնիայի ուսուցչական դպրոցների կաբինէտներն աւելի լաւ են կահա-

ւորուած ուսումնական պիտոյքներով, քան մեր համալսարանները: Ճապոնական երիտասարդութեան ուսման և գիտութեան համար ունեցած ծարաւն այնքան մեծ է, որ ճանապարհորդը գիտէ տասնեակ օրինակներ, երբ պատանիները Սան-Փրանցիսկոյում կամ շոգենաւերի վրա մտել են ամենաստոր պաշտօնի, միայն թէ մի բան սովորեն: Ամերիկայում նրանք պատրաստ են ծառայել ձրի—միայն հացի և բնակարանի փոխարէն, որպէսզի նրանց երկու—երեք ժամ ժամանակ տրուի ուսումնարան յաճախելու համար: Ի՞նչ կայ ուրեմն զարմանալու, երբ ճապոնացի աղքատ բանւորի խրճիթում դուք գտնուում էք և ջերմաչափ մշտական դիտողութիւնների համար, և լրագիր ամենաընդարձակ դիտական տեղեկութիւններով:

Ահա հենց այդ պատանիներին, որոնք դուրս են եկել ժողովրդի միջից, և պարտադիր գրագիտութեանն ու ուսումնարանների ընդարձակ ցանցին (ճապոնիայում ուսումը պարտադիր է) պարտական է այդ երկիրը, որ նորագոյն դիւտերը ոչ միայն ժողովրդի սեպհականութիւնն են դարձել, այլ և որ նրանցով օգտւում է գիտակցաբար ժողովրդի մասսան, որ կարողանում է գործադրել նրանց առօրեայ կեանքի կարիքների համար, շատ քիչ բան ծախսելով:

Ճապոնիայում գիտութեան արած մեծ առա-

ջադիմութիւնը երևում է, նոյն իսկ այս երկրի հետ ամենամակերևոյթաբար ծանօթանալիս:

Սկսենք հէնց նրանից, որ ամբողջ երկիրը ծածկուած է երկաթուղային ցանցով, իսկ նոր գծերը զարմանալի արագութեամբ են աճում: Ճիշտ է, այստեղի ճանապարհները նեղ են և վագօնները փոքր,—կայարանները նման են աւելի փայտեայ թեթև բալագանների, քան մեր ընդարձակ վոկալները, բայց երթևեկութեան էփանութիւնը, գնացքների արագութիւնը և նրանց ամենօրեայ քանակութիւնը ուղղակի ապշեցնում են մարդու: Նոյն իսկ Ներոպայում գնացքները աւելի սակաւ են երթևեկում և աւելի թանգ են, քան այստեղ: Այստեղ երկաթուղիով կարելի է ճանապարհորդել էփան, երբ և ուր կամենաս: Ինչ վերաբերում է հեռագիրներին ու հեռախօսներին, դեռ չը խօսելով նրանց էփանութեան \*) մասին, դուք նրանց կը գտնէք ամեն մի փոքրիկ գիւղում կամ նոյն իսկ 5—6 տնանի գիւղակում:

Դպրոցական և ժողովրդական կրթութեան գործի զարգացման մասին ճապոնիայում մենք առիթ կունենանք խօսելու մի քիչ յետոյ, իսկ առայժմ նկատենք միայն, որ ճապոնական իւրաքանչիւր գիւղում պարտաւորաբար կայ ուսումնարան, որտեղ բացի ճապոնական լեզուից, ա-

\*) Հեռագիրը արժէ բողբ—2 կոպէկ:



ւանդվում է և անդլիերէն. միջնակարգ ուսումնարաններում բացի դրանցից նաև Ֆրանսերէն և գերմաներէն: Դժուար է գտնել մի ճապոնացի, որ չը գիտենայ գոնէ մի օտար լեզու:

Իւրաքանչիւր գաւառական քաղաքում տարին երկու անգամ սարքվում են տեղական արտադրութեան իրերի ցուցահանդէսներ: Այս ցուցահանդէսները ժողովրդի համար ծառայում են իբր լաւ ուսումնարաններ, ուր բոլորը յաճախում են: Յուցահանդէսի մուտքը մէկ կոպէկից աւել չէ լինում: Տեղական այգեգործների համար ամբողջ երկրում շինուած են մուզէներ, ձրի մուտքով, (որոնցից իւրաքանչիւրի մէջ պարտաւորաբար պտնվում է ժողովրդական ձրի ընթերցարան), որոնք լցուած են տեղական և օտար երկրների ընտիր արդիւնաբերութիւններով:

Նոյն իսկ ամենափոքր գիւղը ունի ջրամբար, շինուած գիտութեան և առողջապահութեան պահանջած օրէնքների հիման վրա. ճապոնական գիւղում փողոցների մէջ շատրուանները այնքան սովորական են, ինչպէս մեր գիւղերում— ջրհորները: Բացի դրանից ամբողջ երկիրը ծածկված է ջրանցքների ցանցով, որ հեշտացնում է հաղորդակցութիւնը և մթերքների տեղափոխութիւնը: Մէկ խօսքով, ինչպէս ընթերցողները տեսնում են, ճապոնական ազգաբնակչութիւնը օգտվում է եւրոպական քաղաքակրթութեան ընտիր պտուղներով, և բացի դրանից ճապոնացին ունի ամենալաւը և այն էլ ամենաէժան գնով:

Բոլոր այս բարօրութիւնները, որոնց շատ կարճ ժամանակում հասաւ տեղական ազգաբնակչութիւնը, ստիպեցին նոյն իսկ նրանց հակառակորդներին խոստովանել, որ այս ժողովրդի մէջ կայ արտակարգ ընդունակութիւն: Եթէ այս ամենի վրա աւելացնենք և այն, որ ճապոնացիները, ըստ պրօֆ. Կրասնօվի բնորոշման, աշխարհիս մաքրասէր ազգերից մէկն են կազմում, օժտուած են ամենամեծ արտիստիական ճաշակով, քնքշութեամբ, իսկական հողագործի բարեհոգութեամբ, ուրեմն զարմանալի չէ, որ ճապոնացիներին համարում են համակրելի ժողովուրդ և հաճոյքով այցելում են նրանց այգքան հետաքրքիր և հիւրասէր երկիրը:



V.

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԶՈՒՄՐՃՈՒԹԻՒՆՆԵՐԸ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ, ՖԱԲՐԻԿՆԵՐ:

Եւրոպացիին մի փոքր ժամանակ ապրելով ճապոնիայում, ծանօթանալով նրա բնակիչների նիստ ու կացի հետ, կը զարմանայ այդ աշխատասէր ժողովրդի բնաւորութեան մի գծի վրա:

Այս գիծն է—արտասովոր սէր դէպի ամեն տեսակ ուրախութիւններ, հանդէսներ, տօնախմբութիւններ և զուարճութիւններ:

Տօնախմբութեան բնաւորութիւնը ճապոնացու համար միեւնոյն է. լինի դա կրօնական հանդէս, թէ փառաւոր թաղումն, մանկական տօն, ծաղիկների տօն, թատրոն և այլն, և այլն,—ճապոնացիին միակերպ հաճոյքով է մասնակցում դըրանց:

Այդ ցեղի մէջ նկատուող այս տիրապետող յատկութիւնը բացատրվում է նրանով, որ ճապոնացիին տեղական շատ տօն օրեր ունի. մերթ այս-

տեղ, մերթ այնտեղ կայանում է տօնախմբութիւն, որին մասնակցում է հազարաւոր մարդ:

Նոր եկած մարդու վրա դա այնպիսի տպաւորութիւն է գործում, որ կարծես թէ այդ ազգաբնակիւթիւնը ապրում է յաւիտենական ուրախութեան երկրում, քաղցր անուրջների թագաւորութեան մէջ, ինչպէս ասում են իրանք, ճապոնացիները: Մինչդեռ ճապոնացիները բոլորովին ծոյլ մարդիկ չեն. ընդհակառակը, իրանց աշխատասիրութեամբ նրանք շատերից բարձր են:

Երբ մի անգամ ճանապարհորդի մէկը դարձաւ մի ծերունի և պատկառելի ճապոնացու, հարցնելով, թէ ինչո՞ւ են ճապոնացիներն այդքան սիրում տօներ, նա ստացաւ հետեւեալ պատասխանը.

—Կեանքը մեզ երես չէ տալիս. կարևոր մնդի համար գործածվող իւրաքանչիւր ֆունտ բրինձը մեզանից սակաւ աշխատանք և առողջութիւն չէ խլում. բայց եթէ մենք մեր ամբողջ կեանքը գործ զնէինք մի ֆունտ բրինձի \*) համար, այն ժամանակ մենք վաղաժամ կը ծերանայինք և մեր դրութիւնն էլ ոչինչով չէր բարւոքուի: Ահա թէ ինչու ենք մենք սիրում զուարճութիւններ, տօնախմբութիւններ, որոնց վրա ձեր կարծիքով իզուր մեծ ժամանակ և ոյժ ենք

\*) Ճապոնիայում բրինձը այնպիսի դեր է խաղում, ինչպէս մեզ մօտ ցորենը, որ նրանք ամենկին չեն արտադրում:

կորցնում: Գալայդպէս չէ.—այդ զուարճութիւնները մեզ տալիս են ոյժի և առողջութեան պաշար աշխատելու համար: Նրանք կապում են մեզ կեանքի հետ: Նրանք մեզ մոռացնել են տալիս տխուր օրերի և վատ աշխատանքի վատ տպաւորութիւնը: Այսպիսի օրերին մենք մոռանում ենք ծանր դրութիւնը և յիշում ենք, որ մենք էլ ենք ապրում, օգտվում կեանքից, ուրախանում ենք արևի, լոյսի և բուսականութեան վրա: Եթէ չը լինէր այս, չարժէք ապրել:

«Այս պատասխանը, ասում է ճանապարհորդը, լիովին բացատրեց ինձ այն, ինչ որ ինձ՝ օտար մարդուս անհասկանալի էր թուում: Միևնոյն ժամանակ իմ խօսակցի խօսքերը պայծառ լոյս սփռեցին այդ ժողովրդի մտածողութեան օրիգինալ և ինքնուրոյն եղանակի վրա: Այդ խօսքերը թոյլ են տալիս դատել և այն մասին, թէ առողջ բանականութեան և կենսունակութեան ինչ մեծ պաշար ունեն այդ մարդիկ, որոնց դեռ այժմ էլ շատերը համարում են դրեթէ վայրենիներ»:

Այժմ պարզ է, թէ ինչու այստեղ եկած ճանապարհորդը, որի նպատակն է ուսումնասիրել բնակիչների նիստ ու կացը, բնաւորութիւնը, ձգտումները և բարքերը, ակամայից առանձին ուշադրութիւն է դարձնում նրանց ուրախութիւնների վրա, իբր ժողովրդի համար կենսական մեծ

նշանակութիւն ունեցող երևոյթների վրա:

Նախ աչքի է ընկնում նրանց զուարճութիւնների վերին աստիճան առանձնայատուկ բնաւորութիւնը: Ճապոնացին սաստիկ սակաւապետ է և բաւականանում է քչով, ուստի նա ուրախանում է այն բանի վրա, որը ուրիշի երեսին ոչ մի ժպիտ չէր առաջացնի: Մեծամասնութիւնը հարուստ չէ, նոյն իսկ աղքատ է, և իհարկէ հնարաւորութիւն չունի շատ փող ծախսելու զուարճութիւնների համար: Այս հանգամանքի շնորհիւ ճապոնացիները սաստիկ հնարագէտ են զուարճութիւնների համար միջոցներ, ձևեր և պատճառներ գտնելուն մէջ: Այս բանում նրանք բոլորովին աննման են: Հէնց որ առաջին պտուկը երևաց կեռասի ծառի վրա, ճապոնացին ուրախանում է, տօնում է, սարքում է հանդէսներ, պարեր, և առժշտութիւն և այլն: Հէնց ճապոնական ազգային ծաղիկը՝ խրիզանտիման բուսնի, հազարաւոր ամբօխներ կազմակերպում են աղմկալի տօնախմբութիւններ, որոնք երբեմն օրեր են տևում: Հէնց որ մեհենական կամ տեղական հովանաւոր-երկրորդական աստուած «կամի» տօնը գայ—տասնեակ հազարաւոր ճապոնացիներ խրոնվում են տօնատեղին և երբեմն ամբողջ շաբաթ ցնծում և ուրախանում:

Այդ ժամանակ քաղաքների ու գիւղերի փողոցները և հրապարակները կենդանանում են:

Տօնին մասնակցում են բոլորը, փոքր, մեծ, աղքատից սկսած մինչև առաջին հարուստը:

Տօնին մասնակցողներին մեծամասնութիւնը բոկոտն է լինում: Հազիւ մի քանիսները ոտներին կապած ունեն փայտեայ կոպիտ սանդալներ, մեծամասնութեան ուսերին ձգած է միայն հին, պատառոտած կիրիմօն (բաճկոն): Շատերը իրանց գլխին դրած չեն ունենում նոյն իսկ այնպիսի գլխարկ, ինչպիսին իրանք են հիւսում: Նրանց համար այդ բանը նշանակութիւն չունի: Բոլորի դէմքերի վրա էլ փայլում է անկեղծ ժպիտ և ուրախութիւն:

Ճապոնական ազգաբնակչութեան մէջ առանձին ժողովրդականութիւն ունեն այսպէս կոչուած «մատուրները» կամ երկրորդական «կամի» աստուածութիւնների պատուին սարքած տօնախմբութիւնները, որոնք կատարվում են Իօկահամում: Ահա թէ ինչ հազորդում այդ մասին ուսումնասիրողներին մէկը — պ. Վենիւկովը:

«Մատուրի» տօները տեւեցին երեք օր, իսկ նրանց պատրաստութիւնները սկսուեցին մի շաբաթ առաջ: Իրանք կազմվում էին ճապոնական կառավարութեան հաշուով, որ ուզում էր օտարերկրացիներին ցոյց տալ «կամի» հին կրօնը իր ամբողջ փայլով, և ժողովրդի աչքում երևալ խեղճերի բարերար:

«Քաղաքի բոլոր գլխաւոր փողոցներում շի-

նած էին բարձր ամպհովանիներ: Նրանց տակ տեղաւորվում էին աշտարականման կառքեր, որոնց վերևում կային աստուածների պատկերը, զարդարուած զանազան շքեղ գործուածներով: Կառքերի միջին յարկերում տեղաւորված էին երաժիշտները, որոնք շարունակ նուագում էին: Այս կառքին լծած էին եգներ, և նա շրջում էր քաղաքի բոլոր փողոցներով:

Իօկոհամի աղջիկները շքեղ հագուստներով առանձին թափօր էին կազմում և շարքերով փայլում էին: Ազգաբնակչութեան ներկայացուցիչներըն էլ նոյնպէս շարքերով դնում էին ետեւից: Նոյն իսկ հասարակ բանւորներն էլ հագել էին գունաւոր շորեր:

Աղքատների համար, որոնք այդ տարուայ սովի պատճառով շատ էին, տէրութիւնը ամբողջ պիրամիդներ էր կիտել բրնձի հակերից, իւղի, «սակէ-ի» շիշերից:

Ամեն երեկոյ հրավառութիւն էր լինում — գունաւոր լապտերներով և արհեստական ծաղիկներով, իւրաքանչիւր փողոց զարդարվում էր առանձին գոյնով: Այդպիսի գունաւոր լապտերներ այնպիսի մի փոքր քաղաքում, ինչպէս էր այդ ժամանակ Իօկահաման, վառվում էին առնուազն 25,000 հատ: Ժողովրդի խմբերն այնքան մեծ էին, որ փողոցում ասեղ գցելու տեղ չը կար: Այս բոլորի հետ միասին ոչ հարահրոց, ոչ աղ-

աղմուկ և ոչ ևս հայհոյանք: Քաղաքի հրապարակների ու փողոցների նեղ տարածութեան վերա խոնուած 120,000 հոգու մէջ ոչ մի գողութիւն չը պատահեց: Սա իրօք գուցէ անհաւանական թուայ, ասում է պ. Վենիւկովը, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ բոլոր տօնախմբութեան ժամանակ փողոցներում ոստիկան չէր երևում»:

Այս տողերը գրողը իր կողմից ևս կարող է աւելացնել, որ իր տեսած տօնախմբութիւնների ժամանակ չէ յիշում, թէ մէկը գոնէ կռուէր կամ հայհոյէր: Ամբօխն իրան պահում էր զարմանալի բաւ և կարգին, առանց ոստիկանութեան միջնորդութեան, որ տօների ժամանակ բոլորովին չէր երևում: Ամբօխի մէջ գողութեան մասին ոչ մի ճանապարհորդ չէ լսել:

Ով որ ցանկանում է ձապոնիան տեսնել տարուայ ամենաուրախ ժամանակ, պէտք է դրնայ այնտեղ նոր տարուց առաջ, որ այստեղ տօնվում է առանձին փառահեղութեամբ: Յունուարի մէկի օրը ձապոնացիները կոչում են «ԳանՍան» — այսինքն «Երեք սկիզբ», որ նշանակում է տարուայ, ամսի և օրուայ սկիզբ: Նոր տարուայ այցելութիւնները տևում են երեք օր իրար վրա, իսկ շնորհաւորութիւնները — մինչև յունուարի 15-ը: ձապոնացիների համար մեծ նշանակութիւն ունեցող այս տօնի պատրաստութիւնները տեսն-

վում են նոր տարուց երկու երեք շաբաթ առաջ: Սկսում են մաքրել, վերանորոգել տները, լուսնալ յատակը և կահ-կարասիքը. մի խօսքով ըսկալում է «լուացարուք սրբեցարուք»:

Այդ ժամանակի ընթացքում աղբը աւելում են սովորաբար բամբակի կանաչ ճիւղերից և տերեւներից հիւսած աւելով, որ նշան է աւատութեան և հարստութեան:

Դեկտեմբերի երկրորդ կիսում ամենուրեք սարքվում են ահագին տօնավաճառներ, որտեղ վաճառահանվում են բացառապէս նոր տարին դիմաւորելու պիտանի առարկաներ: Սակայն աւելի կենդանութիւն են ստանում փողոցները դեկտեմբերի 31-ին: Փողոցներում ժողովրդի ահագին խմբեր են լինում: Փողոցները զարդարվում են հազարաւոր գոյնզգոյն լապսերներով, որոնք վառվում են ամբողջ գիշերը: Այս ամբողջ գիշերը քաղաքում կամ գիւղում ոչ ոք չէ քնում: ձապոնացիները սովորութիւն ունեն այս ամբողջ գիշերը փողոցում անց կացնել — հին տարին ճանապարհ գցելու և նոր տարին դիմաւորելու համար:

Եւրոպացի տարօրինակ սովորութիւններ կը տեսնի նոր տարու նախընթաց օրը: Օրինակ, այդ ամբողջ օրը շարունակ ամեն տեղ ուսում են երկար մակարօններ — որպէսզի իրանց հարստութիւնը «երկար» լինի: Տների ամենակարևոր զարդա-

րանքները լինում են սոճի ծաղիկներ և ճիւղեր, իբր նշան երկարատևութեան: Նոր տարուայ օրը սենեակները չեն մաքրում, որպէսզի նոր—տարեան օգը դուրս չը վանեն, և այլն և այլն:

Ճապոնական ժողովրդի չքաւորութեան շնորհիւ այս բոլոր զուարճութիւնները էժան են նրատու: Նրանք մեծ մասամբ տեղի են ունենում բացօդեայ, որին նպաստում է այս երկրի լաւ կլիման: Այստեղ, առաւելապէս հարաւում, նոյն իսկ դեկտեմբեր և յունուար ամիսներին ծառերը կանաչ են լինում, և երկիրը ծածկվում է խայտաճամուկ և վառ, գեղեցիկ ծաղիկներով:

Մինչև անգամ թատրոնական ներկայացումներն էլ, որ ճապոնացիները «մատուրից» պակաս չեն սիրում, տեղի են ունենում բացօդեայ: Առաւօտից մինչև երեկոյ (ճապոնական թատրոններում ներկայացումները լինում են արևի ծագելուց մինչև մայր մտնելը) ժողովրդի խումբ բազմութիւնը խոնվում է շուտափոյթ սարքված փայտեայ բեմի շուրջը, որի վրա ամբողջ օրը չէ դադարում դերասանների խաղը:

Շատերը տօն օրերին նոյն իսկ խմբվում են այստեղ ամբողջ ընտանիքներով, իրանց հետ վերցնելով ուտելիք և խմելիք, և շարունակ լսում են դերասաններին:

Այս ուրախ, տօնական և բազմամարդ ժողովատեղին եւրոպացուն, առաւելապէս ռուսին

յիշեցնում է մեր եարմարկաները: Եւ սրանք հէնց եարմարկաներ են, որովհետև այստեղ մանրավաճառները պակաս առևտուր չեն անում, վրանների մէջ, նրանք ծախում են ուտելիք, մանրունք, հագուստ, երեխայական խաղալիք և այլն:

Տարբերութիւնը նրանումն է միայն, որ մեզանում տօնավաճառը լինում է տարուայ ընթացքում մէկ կամ երկու անգամ, այն էլ ոչ ամեն տեղ: Իսկ ճապոնիայում այս տօնավաճառները տևում են առաւօտից մինչև երեկոյ, ամեն օր, քաղաքի զանազան մասերում միաժամանակ, և ոչ միայն մեծ, այլ և փոքր քաղաքներում: Ճապոնացիներն այնքան են սիրում թատրոն և միշտ յաճախում, որ այստեղ իւրաքանչիւր քաղաքում կայ երկու, երեք, և աւելի ժողովրդական թատրոն: Ներկայացումները լինում են ամեն օր, ամբողջ տարուայ ընթացքում:

Թատրոնների հետ միատեղ հասարակ ժողովրդի սիրած ժողովատեղիները հանդիսանում են «թէյատոնները»: Այս տները երկրի բոլոր կողմերում կան: Նոյն իսկ ամենավատ, փոքրիկ, աննշան գիւղը ունի երկու—երեք «թէյատուն»:

«Թէյատունը» իսկապէս հիւրանոց է կամ իջևան: Ճապոնացուն այստեղ դրաւում են «գէյշաները», այսինքն երգչուհիները, պարողները և երաժշտուհիները: «Գէյշաների» պարը տեսնելը, նրանց երգը լսելը և նրանց նուագածութեամբ

գուարճանալը — ճապոնացու սիրած գուարճու-  
թիւններից մէկն է:

Սակայն չը պէտք է մտածել, որ «գէյշանե-  
րը» նման են մեր թափառական երգչուհիներին  
ու երաժիշտներին: Ընդհակառակը, մեծ մասամբ  
սրանք դերասանուհիներ են, որոնք ոչ միայն ե-  
րաժշտական կրթութիւն ունեն, այլ և լաւ ընդ-  
հանուր կրթութիւն: Ճապոնացիները այս տեսա-  
կէտից խտտապահանջ են և լաւ գնահատող: Նը-  
րանց վարժ ճաշակին բաւարարութիւն տալ դը-  
ժուար է: Եւ եթէ սիրով այցելում են գէյշաների  
ներկայացումները, դա նրա համար է, որ նրանք  
լաւ են պարում և երգում:

Դժբաղդաբար, «գէյշաների» համերգները շատ  
թանկ են նստում ճապոնացու գրպանին, և այս  
բաւականութիւնը կարող է ոտանալ քիչ թէ շատ  
ապահով մարդը: Ուստի հարուստ ճապոնացիներ  
ը շատ յաճախ (համարեա միշտ) իրանց վրա են  
առնում «թէյատներում» ժողովրդին բաւականու-  
թիւն տալու ծախսերը: Ճապոնացիները սաստիկ  
գնահատում են այսպիսի բարերարութիւնը և սի-  
րով են այցելում համերգները, որոնք գոհացնում  
են իրանց սէրը առ երաժշտութիւնը, երգեցո-  
ղութիւնը և բանաստեղծութիւնը:

Բայց հէնց որ վերջանում է համերգը, ներ-  
կայացումը, ընդհատվում են տօնախմբութիւն-  
ները ու հանդէսները, ճապոնացին նոր ուժով

վերցնում է գութանը, քերիչը և մածը: Նրա հա-  
մար նորից սկսվում է աշխատութեան ժամանա-  
կը, և նայելով իր գործի վրա կռացած այդ մար-  
դուն, դուք չէք հաւատայ, որ դեռ երէկ նրան  
տեսել էք անհոգ, փողոցում զբօսնելիս, կամ թէ  
«թէյատանը» որևէ «գէյշային» լսելիս:

Կարծես նա բոլորովին վերածնվում է, նոր  
մարդ է դառնում:

Վաղը կամ միւս օրը այս նոյն մարդը, այս  
աղքատը և մշտական թշուառը կարող է դէն ձը-  
գել իր քերիչը և գութանը, և միանալ առաջին  
հանդիպող թափօրին, իհարկէ, եթէ միայն նա  
շտապով գործ չունի:

Սյուպէս են անց կացնում իրանց կեանքի  
մեծ մասը այս ուրախ երկրի որդիները: Ծանր  
աշխատանքից նրանք անցնում են անհոգ ուրա-  
խութեան, անհոգ ուրախութիւնից՝ ծանր, քրտ-  
նաթոր աշխատանքին:

Բայց ճապոնական երկրում մարդ միայն օ-  
րական հացով և ուրախութեամբ չէ լինում կուշտ:  
Ուրախութիւնն ու աշխատանքը—դեռ բոլորը չեն  
ճապոնացու համար: Նա ժամանակ է գտնում և  
գիտութեամբ պարապելու. ճապոնացին բարձր է  
գնահատում կրթութիւնը և լուսաւորութիւնը, և  
ամեն դէպքից օգտվում է որևէ բան սովորելու:

Նոյն իսկ կարելի է ասել, որ լուսաւորուե-  
լու ցանկութիւնը ճապոնացու մէջ աւելի մեծ է:

Այս բանի լաւագոյն ապացոյցը ծառայում է այն, որ ճապոնիայում տպւում է աւելի շատ գիրք, քան թէ Ռուսաստանում, թէև վերջինս նրանից մեծ է ազգաբնակութեամբ երեք անգամ, իսկ տարածութեամբ—մօտ յիսուն անգամ: Ճապոնացիները աւելի շատ ուսումնարաններ (ժողովրդական տարրական) ունեն, քան թէ ուրիշ քաղաքակիրթ պետութիւնները. այս պատճառով էլ ճապոնիայում անգրագէտ մարդ չը կայ. սրանից դեռ 27 ասրի առաջ այստեղ աղջիկների ու տղաների ուսումը պարտադիր եղաւ տարրական ուսումնարաններում: Ներկայումս անգրագէտ լինելը ճապոնացու համար ամօթ է համարվում:

Ճապոնիայի ժողովրդական ուսումնարանների ծրագիրը աւելի ընդարձակ է, քան թէ Եւրոպայի ու Ամերիկայի ժողովրդական ուսումնարաններինը, բայց և այնպէս ճապոնացիները դրանով էլ գոհ չեն: Նրանք պահանջում են, որ իրանց աւելի շատ գիտութիւններ աւանդուեն, և կասկած չը կայ, որ նրանց պահանջը կը կատարուի: Դեռ 25 տարի առաջ, երբ ճապոնիան նոր էր սկսել յարաբերութեան մէջ մտնել եւրոպական երկիրների հետ, ճապոնիայի միկագոն գըրում էր իր հրովարտակում. «Ես կը ցանկանայի, որ հիմիկուանից կրթութիւնն ու լուսաւորութիւնը այնպէս ընդարձակ կերպով տարածուի մեր երկրում, որ ամբողջ տէրութեան մէջ չը գտնուի

ոչ մի գիւղ, ուր լինէր անգրագէտ ընտանիք, և չը գտնուէր մի ընտանիք, որ ունենար անգրագէտ անդամ»:

Նրա ցանկութիւնն արդէն կատարուել է.— այժմ ճապոնիայում անգրագէտ չը կայ: Բայց ճապոնացիները աւելի առաջ գնացին: Նրանք շատացրին պետութեան և մասնաւոր անձանց ձեռքով հիմնված բազմաթիւ բարձր և մասնագիտական դպրոցները, և ահա արդէն տաս տարի է, որ ճապոնիայում չը կայ ոչ մի օտարերկրացի ճարտարապետ, բժիշկ, մեքենագէտ, պրօֆէսօր և ուսուցիչ: Այս բոլոր տեղերը իրանք — ճապոնացիներն են բռնել: Սա աւելի զարմանալի է, որ երեսուն տարի առաջ ճապոնիան դեռ անկիրթ և վայրենի երկիր էր, եւրոպացուց և գիտութիւնից վախենում էր, ինչպէս կրակից: Որպիսի ահազին անդունդ ստեղծուեց նախկին և այժմեան ճապոնիայի մէջ: Որքան հեռու, շատ հեռու գընացին իրանց հայրենիքից ու պապերից ներկայ ճապոնացիները:

Այժմ ճապոնացիները յստարութեամբ այցելում են եւրոպական համալսարանները, մուզէները և ուսումնարանները, և տարէց տարի իրանց ցեղակիցներին հարստացնում են նորանոր գիտական պաշարով: Ճապոնական շատ գիտնականների անունները արդէն յայտնի են դարձել ոչ միայն իրանց հայրենիքում, այլ և նրանցից



հեռու—Եւրոպայում: Համարձակ կերպով կարելի է ասել, որ ճապոնացիները դադարել են արդէն եւրոպացուն աշակերտելուց: Եւ ով գիտէ, թէ կարճ ժամանակում նրանք չեն կորի իրանց ուսուցիչների առաջը: Հէնց այժմ էլ մի քանի բան կարելի է նրանցից սովորել, թէկուզ այն բանը, որ ամենքի համար մատչելի դառնայ, առանց սեռի, հասակի ու ծագման խտրութեան, կրթութեան բոլոր տեսակները (տարրական, միջին և բարձր), ինչպէս արդէն այդ ունեն ճապոնացիները:

Իբր մի երկիր, որ հողի սակաւութեան պատճառով իր ապագայ կարողութիւնը հիմնում է միայն գործարանական արդիւնաբերութեան վերա, և իբր մի երկիր, որ չէ ցանկանում այդ բանում կախումն ունենալ եւրոպացիներից, ճապոնիան առանձին ուշադրութիւն դարձրեց տեխնիքական և արդիւնաբերական կրթութեան վրա:

Դեռ 25 տարի առաջ, նա բաւականանում էր տեղական, ինքնուրոյն արտադրութիւններով, և եւրոպական կուլտուրայից հեռու էր մնում: Բայց այն ժամանակից նա ոչ միայն իր դռները բացեց եւրոպական արդիւնաբերութեան արտադրութիւնների առաջ, այլ և ինքը դարձաւ եւրոպայի ախոյեան: Այս արագ առաջադիմութիւնը արժանի է առանձին ուսումնասիրութեան ինչպէս ժողովրդական—տնտեսական, նոյնպէս և մանկավարժական տեսակէտներից:

Ի՞նչ կերպով այս զուտ ասիական ազգը, որ հեռու էր մնում օտար ազդեցութիւններից, կարողացաւ այդքան շուտ մտերմանալ մեր գիտութեան ու տեխնիկայի հետ, և սկսեց տարածել նրանց իր հայրենիքում: Այս հարցը շատ մարդիկ են առաջարկում, որոնք սիրել են այս երկիրը: Մենք ուսմանը—ամենից շատ պէտք է սովորենք և իմանանք, թէ ինչպէս են աշխատում ճապոնացիները, ինչպէս են նրանք առևտուր անում, որովհետև նրանց ապրանքն էլ ծախվում է այն վաճառատեղիներում, որտեղ և մերը—Կօրէայում, Չինաստանում և այլն:

Ուստի կաշխատենք աւելի ընդարձակ պատասխան տալ վերոյիշեալ հարցին: Այդ կը ցոյց տայ մեզ, թէ ինչ միջոցներով կարելի է հասնել այն աշողութեան, որով այժմ իրաւացի կերպով պարծենում են ճապոնացիները: Ահա թէ ինչ է դրում Ֆրանսիացի Դանիէլ Բիլլէն այս առիթով.

«Բանը նրանումն է, ասում է նա, որ վերջին 25 տարիների ընթացքում, երբ ճապոնիան նոր սկսեց յարաբերութեան մէջ մտնել եւրոպացիների հետ, նա չէր նստել ձեռները ծալած: Գապոնացիները ամեն ջանք գործ դրին ուսումնարանների զարգացման համար, բացեցին տեխնիքական, արհեստագիտական և առևտրական դպրոցներ: Բայց նրանք դրանով չը սահմանափակվեցին: Նպատակ դնելով—ճապոնիայի ար-

գիւնաբերական ոյժը ստեղծելու, նրանք չէին խնայում փող՝ երկաթուղիներ, հեռագիրներ և հեռախօսներ շինելու համար, և միևնոյն ժամանակ մեքանիկական գործարանների, լաբորատորիաների և այլ այդպիսի բաների համար: Նրանք խոստովանում էին, որ արդիւնաբերութիւնն ու առևտուրը այն ժամանակ միայն կը ծաղկեն, երբ ճապոնացիները կը կարողանան օգուտ քաղել ոչ պակաս կատարելագործուած տեխնիքական արհեստներից: Նրանք հասկանում էին նոյնպէս, որ այդ բանին կարելի է համեմել միայն տեխնիքական կրթութիւն տարածելով, որ ստեղծուած է ոչ միայն հմուտ ղեկավարներ, այլ և փորձուած բանւորներ»:

Ներկայումս ճապոնացիները հասել են իրանց ձգտած նպատակին: Նրանք այժմ կարող են ազատ ապրել առանց օտարների օգնութեան: Օրինակ, վերջին տեղեկութիւնների համաձայն, նրանք ունեն 1<sup>1</sup>/<sub>2</sub> հազարից աւելի սեպհական բանիմաց ինժինէրներ և ամբողջ շինարարական ու երկաթուղային գործի ծառայական մասը գընանվում է ճապոնացիների ձեռքում:

Ի միջի այլոց շատ հետաքրքիր է և ճապոնական երկաթուղային գործի պատմութիւնը:

Երբ ներկայ ճապոնական կայսրն իր ձեռքն առաւ կառավարութիւնը և կամեցաւ երկաթուղիներ շինել ճապոնիայում, նա Եւրոպայից ին-

ժինէրներ հրաւիրեց: Բայց նրանցից իւրաքանչիւրին նա մի պայման դրեց, որ մեծ պատիւ է բերում նրա խելքին ու հեռատեսութեանը: Այսպէս, նա օտար ինժինէրներից իւրաքանչիւրին պարտաւորեցրեց այդ արհեստի թէօրիան ու գործնական վարժութիւնը աւանդել մի քանի երիտասարդ ճապոնացիներին. նոյն ժամանակ ճապոնիայում բացուեցին մի քանի մասնագիտական երկաթուղային դպրոցներ, որտեղ սովորում էին երիտասարդ ճապոնացիներ, եւրոպացի ինժինէրներին աշակերտելու համար:

Շուտով պետութիւնը համոզուեց այդ սխառէմի անպէտքութեան մէջ և ուղարկեց (1872 թ.) Եւրոպա մի ամբողջ դեսպանութիւն, ընտիր պրօֆէսորներ հրաւիրելու — ինժինէրական դպրոց հիմնելու համար: Պրօֆէսորները եկան, և շուտով դպրոցն էլ բացուեց: Սկզբում դասընթացքը վեցամեայ էր և բաւական բարդ: Առաջին երկու տարիների ընթացքում աշակերտները միայն դասախօսութիւններ էին լսում. հետեւեալ երկու տարուայ ընթացքում նրանք տարուայ վեց ամիսը պարապում էին սովորելով և վեց ամիսը — պրակտիկայով: Վերջապէս վերջին երկու տարուայ ընթացքում նրանք իրանց ուսածը գործադրում էին պետական որևէ արհեստանոցի մէջ:

Թէ որքան լաւ էր պատրաստում իր աշա-

կերտներին վերոյիշեալ դպրոցը, երևում է նրանից, որ նրանք Անգլիա գնալով՝ իրանց կրթութիւնը աւարտելու, իրանց ընդունակութեամբ և գիտութեամբ զարմացնում էին անգլիացիներին: Ժամանակի ընթացքում պետութիւնը սկսեց աւելացնել տեխնիքական ուսումնարանների թիւը: Իսկ սրանից տաս տարի առաջ՝ նա սկսեց հիմնել արդիւնաբերական դպրոցներ — արհեստաւորների պատրաստելու համար: Բանւորներն էլ մոռացութեան չը մատնուեցին: Բոլոր արդիւնաբերական դպրոցներում կան բաժանմունքներ, որտեղ բանւորների որդիների համար կարգացվում են մասնագիտական դասընթացներ:

Միևնոյն ժամանակ ճապոնական պետութիւնը զանց չէ աւնում առևտրական գործիչներ պատրաստելը: Նա հիմնել է երկու կարգի դըպրոցներ: Մէկում վաճառականութեան նուիրուած երիտասարդները կարող են ընդարձակ գիտական տեղեկութիւններ ձեռք բերել իրանց մասնագիտութեան համար: Միւսում — ճապոնացի պատանիները կարող են աւելի լայն կրթութիւն ստանալ, առևտրական մեծ ձեռնարկութիւնների համար:

Այս բոլորի շնորհիւ զարմանալի չէ, որ ճապոնիայում ֆաբրիկների, գործարանների, արհեստաւորների թիւը տարէց տարի զգալի կերպով մեծանում է: Այստեղ արդէն առաջ են ե-

կել մանուֆակտուրային և գործարանական կենտրոններ (օրինակ Օսակա), որոնք ունեն մեծ ֆաբրիկային տասնեակ ձեռնարկութիւններ: Նրանք իրանց մթերքները ոչ միայն իրանց վաճառատեղիներումն են արտահանում, այլ և բաւական մեծ քանակութիւն ուղարկում են հարևան ասիական երկիրները:

Դժբաղդաբար, ճապոնացիների այս փայլուն առաջագիժութիւնը ունի և իր վատ կողմերը բանւորների վերաբերմամբ:

Առաջ, երբ ճապոնիայում կային միայն փոքրըր արհեստանոցներ, բանւորները իրանց արհեստանոցի տիրոջ ընտանիքի մասն էին համարվում: Նա աշխատանքը բաժանում էր նրանց հետ, իր սրտին մօտ էր աւնում նրանց շահերը, և թէ անգործութեան ծանր օրերը, թէ յաջողութեան փայլուն օրերը անց էր կացնում նրանց հետ: Բայց այն ժամանակից, երբ ճապոնիայում երևան եկան միլլիօնաւոր ֆաբրիկներ ու գործարաններ, կարծես մի պատ բարձրացաւ բանւորների և տիրոջ մէջ, կամ «կուլի» — ինչպէս կոչում են իրանք: Նրանց դրութիւնը վատացաւ, — նրանց շահերը տարբեր և նոյն իսկ հակադիր դարձան: Դա հասկանալի է. — առաջ նրանք հասարակապէս աղքատ էին, իսկ այժմ, մի կողմից երևան եկաւ միլլիօնատէրը, որ ունի ահագին նիւթական միջոց և շատ գործեր, միւս կողմից —

նոյն աղքատ բանւորը—կուլին: Մէկը հետզհետէ հարստանում էր, միւսը—աղքատանում:

Այս փոփոխութիւնը յօգուտ կուլիի չէր:

Բացի այդ, կուլիները յաճախ մնում են անգործ: Ճապոնիայում բէֆօրմներ մտցրած օրից շատ մարդիկ պարապ մնացին.— բօնինները, եակունիները, դայմիօսները և այլն: Նախկին կարգերը վերացնելուց յետոյ նրանք բոլորն էլ չը գիտեն ինչ անել: Նրանք չէին կարող երկրագործութիւն անել, որովհետեւ թէ անընդունակ էին այդ բանին, և թէ ճապոնական լեռնոտ հողը շատ սակաւ է վարձատրում աշխատաւորին:

Մի բան մնաց—մտնել ֆաբրիկա և գործարան: Գործարանատէրերը լաւ են հասկանում, թէ որպիսի անելանելի դրութեան մէջ են գտնվում այդ մարդիկ, և աշխատում են քամել նրանց հիւթը:

Ճապոնացի կուլիի դիմացկանութիւնը, շնորհիւ այդ հանգամանքի, ապշեցնում է օտարին: Այստեղ, ինչպէս ասացինք, օրական 14—16 ժամ անընդհատ աշխատում են . . . . .

Սովորաբար աշխատանքն սկսվում է առաւօտեան 6 ժամից և վերջանում է երեկոյեան 8 ժամին: Այս ամբողջ օրուայ ընթացքում կուլին հանգստանում է միայն 40 րոպէ, — քսան րոպէ ճաշելու, իսկ քսան րոպէ ընթրելու համար:

Կանայք և երախաներն էլ հնազանդվում են այդ պայմաններին:

Այս ամենը իհարկէ ամենից առաջ ներգործում է թշուառ կուլիների առողջութեան վրա:

Եւ իրօք, ցաւալի է նայել նրանց վրա: Ճապոնացիները, իրանց փոքր հասակի և վտիտութեան պատճառով, գրեթէ թզուկի տեսք ունեն: Եւ կուլիները արդէն սոսկալի խղճալի տպաւորութիւն են թողնում: Դեղնած—գունատ, դուրս ցցուած այտոսկրներով, վտիտ, խոր ընկած աչքերով, նրանք նման են ոչ թէ առողջ, այլ ծանր հիւանդութիւնից վերկացած մարդկանց: Եւ անհաւատալի է է թւում, որ այս կիսահիւանդ մարդիկ երկար տարիներ շարունակ կատարում են այն ծանր աշխատանքը, որ չէր կարող կատարել առողջ և ուժեղ մարդը: Աւելի ևս անհաւատալի է, որ ճապոնիան վերջին ժամանակների իր արդիւնաբերական և վաճառականական առաջադիմութեամբ պարտական է այս համակրելի, վատ վարձատրուող աշխատաւորների դիմացկանութեան և սակաւապահանջութեան:

Այստեղ, ֆաբրիկական թաղերում շատ քիչ է նկատվում այն կենդանութիւնը, այն կատակասէր բնաւորութիւնը, որ սովորաբար ունեն ճապոնացիները:

Ո՞վ կանցկացնէ մտքից—քաղցած փորով եր-

գեր—և այն էլ անընդհատ, ճնշող աշխատանքից յոգնած:

Աւելի խղճալի է կանանց դրութիւնը: Ինչպէս ամեն տեղ, նրանք տղամարդկանցից թոյլ են և ճապոնական գործարանական կարգերը անփոփոխ կերպով տարածվում են նաև նրանց վրա: Նրանք այստեղ չեն հետևում իրանց մազահիւսուածքին—իւրաքանչիւր ճապոնուհու գեղեցկութեանն ու պարծանքին: Իսկ սա արդէն նրա համար մեծ զրկանք է:

Բայց աւելի խղճալի են երեխաները: Նրանք սաստիկ նիհար են, տկար, մռայլադէմ և հիւժուած: Մռայլ, ֆաբրիկային խողովակների ծուխից սևացած այս գործարաններում լսելի չէ մանկական ձայն, ծիծաղ, չեն երևում ուրախ, ժրպտուն աչքեր, առողջ կարմրաթուշ դէմքեր: Այստեղ այնպէս խաղաղ է, տխուր, ինչպէս գերեզմանոցում: Նրանք որպէս ստուերներ արագութեամբ շարժվում են.—գործը չէ սպասում: Եւ միայն ահագին մեքենաների գռռոցը, անիւների շրխկոցը, երկաթէ մասերի թրխկոցը յիշեցնում են, որ շուրջը եռում է գործունեայ կեանք, որ կայծերից, ծխից և գորշուց սևացած այս ահագին պատերի մէջ «կոփվում է (ինչպէս տեղական հայրենասէրներն են ասում) ճապոնիայի արդիւնաբերական հզօրութիւնը»:

Եւ որքան կեանք, արիւն, առողջութիւն և

ոյժ են բարձրացնում այս ծինեւոյգները ծխի ու կայծի հետ միասին և ցրւում օդի մէջ. սրբան յոյսեր է խորտակում այն ամենի մուրճը, որ կոփում է այդ երկրի արդիւնաբերութիւնը:

Երեխաներին գործարան չը տալու և նրանց բանւորական օրը կրճատելու համար այժմ աշխատում են շատ կարեկից մարդիկ, առաւելապէս ուսումնարանների ուսուցիչները: Սրանք շարունակ գանգատում են, որ ֆաբրիկներն ու գործարանները մանուկներին անշատում են դպրոցից: Յոյս կայ, որ վաղ թէ ուշ երեխաների գործարանական ժամերը կը կրճատուեն:

Որքան էլ որ տեղական գործարանում փող աշխատելը դժուար է ճապոնացու համար, սակայն սա խստապահանջ չէ և սիրով կը հաշտուի իր այդ ծանր, բայց քիչ գնահատող \*) աշխատանքի հետ, եթէ միայն այդ վաստակը լինէր յարատե և մշտական:

Բայց այստեղ արմատացել է մի սովորութիւն, որ միշտ մազի վրայից կախուած է պահում կուլի բաղդը:

Ծերունի ճապոնացիները պատմում են, որ եւրոպական ձևով բացուած գործարանների առաջին ժամանակը կուլիին աւելի քիչ էին վճարում, քան այժմ, և ստիպում էին աւելի շատ

\*) Չափահաս կուլին ստանում է, օրինակ, մանուֆակտուրայի ֆաբրիկում մօտ 25 կոպ. օրը, շափահաս կինը—մօտ 13 կոպէկ:

աշխատել, քան այժմ: Սա բացատրվում էր նրանով, որ գործարանատէրերը վախենում էին, թէ իրանց ապրանքը աւելի թանգ կը ծախվի, քան ճապոնիա ներմուծվող անգլիական ապրանքը, և ձգտում էին կարելիին չափ իջեցնել իրանց ապրանքների արժէքը: Նոյն իսկ ճապոնացի կուլին չէր կարողանում ապրել այսպիսի սուղ պայմաններում, ուստի նա հետզհետէ սկսեց թողնել իր նախկին տէրերին և մտնել նորաբաց Փարբիկները: Ի հարկէ, այստեղ նրանց մեծ սիրով էին ընդունում, որովհետեւ այն ժամանակ ճապոնիայում մեծ կարիք կար փորձուած և հմուտ մարդկանց: Ժամանակի ընթացքում սրանց դրութիւնը նորից վատացաւ: Սրանք նորից սկսեցին թողնել իրանց տեղերը և անցնել նորաբաց գործարանները: Այն ժամանակ գործարանատէրերը հասկացան, որ այս կարգը ձեռնառու չէ և նրանք իրար հետ համաձայնութիւն կայացրին, — որի հիման վրա ոչ ոք իրաւունք չունէր պաշտօնաթող բանւորին ընդունել առանց վկայագրի նախկին տիրոջից:

Այսպիսով կուլիները գործարանատէրերի ճանկերի մէջ ընկան: Այժմ այլևս հնարաւորութիւն չունենալով Փարբիկայից հեռանալու, նրանք դարձան մի տեսակ կամաւոր ստրուկներ: Ի հարկէ նրանց ոռօժիկն էլ կը ճատվեց: Բանւորների վատ դրութիւնը մի մեծ չարիք է, որից տանջվում է ճապոնիան:

VI.

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԾՈՂԱՓՆԵԱՅ ՆԱԻԱՀԱՆԳՍՏԱՅԻՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ: ԱՆԳՂԻԱՅԻՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ: ՃԱՊՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՅԸ: ԶՕՐԻԸ ԵՒ ՆԱԻԱՏՈՐՄԻՂԸ: ՃԱՊՈՆԱԿԱՆ ՀԱԶՈՒԱԳԻՒՏ ԻՐԵՐԸ:

Եթէ մի մարդու, որ երբէք իր գաւառի կամ նահանգի սահմաններից դուրս չէ ելած, միանգամից տանեն ճապոնական որևէ նաւահանգիստ, նա սաստիկ կը զարմանայ: Գծուար թէ նա հաւատայ, որ գտնվում է Եւրոպայից 12,000 վերստ հեռաւորութեամբ մի քաղաքում:

Եւ մինչև նա չը գիտէ ճապոնական տեղական նիստ ու կացը, նրանց կենցաղավարութիւնը, սովորութիւններն ու հագուստը, նրան կը թուի, որ գտնվում է ոչ թէ հեռաւոր Սոխայի ափում, այլ որևէ մի եւրոպական քաղաքակիրթ երկրում:

Մեր գաւառական, նոյն իսկ նահանգական քաղաքը նրան կը թուի իբր դիւր, համեմատած իր այստեղ տեսածի հետ: Ըշմարիտ որ ճապո-

նական նաւահանգստային քաղաքները ոչնչով չեն տարբերվում արևմտեան Եւրոպայի մեծ քաղաքներից: Ծովափնեայ քաղաքներում գերակշռող տարրը կազմում են անգլիացիները, որոնք ամեն բանի վրա թողել են ազդեցութիւն: Անգլիացիները եղել են ճապոնացիների առաջին ուսուցիչները, առաջին անգամ նրանք ծանօթացրին սըրանց եւրոպական գիտութեան, կեանքի և պայմանների հետ: Բացի դրանից, համարեայ թէ առաջին անգամ նրանք մտան ձապոնիա, մեծ թւով բնակուեցին և ձեռնարկեցին առևտրական գործի, կապ հաստատելով Հին աշխարհի հետ,—ներմուծում էին իրանց մթերքները, արտահանում էին ամեն կողմ ճապոնական արտադրութիւնները և այլն: Եւ հիմա էլ ձապոնիայում բնակող բոլոր օտարերկրացիների մէջ գերակշռող են հանգիստնում անգլիացիները: Կան քաղաքներ, օրինակ մեծ նաւահանգստային Կօբէ քաղաքը, որոնք ամբողջովին բնակուած են անգլիացիներով:

Ուստի և փողոցների դասաւորութիւնը, տների ճարտարապետութիւնը և կարգերը զուտ անգլիական բնաւորութիւն են կրում: Ամենուրեք դուր տեսնում էք քարեայ մեծ շինութիւններ, շքեղ խանութներ, գեղեցիկ այգիներ, լայն, արձակ և մաքուր փողոցներ լայն մայթերով, ամենուրեք տնկած են բազմաթիւ ծառեր ու ծաղիկներ: Հրապարակներում կանգնեցրած են գեղե-

ցիկ արձաններ, շինուած են շատրուաններ, ծաղկոցներ, ամենուրեք ելեքտրական լուսաւորութիւն: Հիւրանոցները ունեն բոլոր յարմարութիւնները և պակաս չեն եւրոպականներից. ամեն տեղ վերելակ մեքենաներ, որոնք ազատում են ձեզ դժուարութեամբ սանդուղները ելնելուց:

Մի խօսքով, այստեղ ամեն ինչ այնպէս է շինած և յարմարեցրած, որ այստեղ ապրող իւրաքանչիւր մարդ ունենայ եւրոպական կեանքի բոլոր յարմարութիւնները, և նոյն իսկ անգլիացին մոռանայ իր հայրենիքը:

ձապոնական քաղաքների բարեզարգութիւնը և արտաքին գեղեցկութիւնը հիանալի է:

Այս նաւահանգստային քաղաքներում ամբողջ կեանքի եղանակը կատարեալ արևմտաեւրոպական է, այսինքն ամենից շատ անգլիական բնաւորութիւն է կրում: Օրակարգութիւնը, հասարակական զուարճութիւնները, ընտանեկան կեանքը—բոլորովին այնպէս են, ինչպէս Անգլիայում:

Բայց այդ զարմանալի չէ: Անգլիացիները համարեա թէ գրաւել են երկրի ներքին առևտուրը, համարեա թէ նրանք են մենակ միջնորդներ—ճապոնական ապրանքները՝ Եւրոպա, Ամերիկա և Ասիա արտահանելու գործի մէջ: Անգլիացիները ոչ միայն դնում են ճապոնական ապրանքները, այլ և ծախում են նրանց Եւրոպայից բե-

րած ապրանքները: Այս բանում համոզուելու համար հարկաւոր է միայն դիտել տեղական քաղաքների ծոցերն ու նաւահանգիստները:

Այստեղ դուք կը գտնէք Հին և նոր աշխարհի բոլոր ազգութիւնները, օվկիանական մեծ նաւեր — չինական, ամերիկական, ֆրանսիական, գերմանական, նորվեգիական, դանիական, պորտուգալական, սպանիական: Խտալական, ռուսական: Բայց սրանց մէջ նշանաւոր տեղը բռնում են անգլիական առևտրական նաւատորմի նաւերը:

Անգլիական առևտրական և պատերազմական նաւերի յաճախակի երևումն ճապոնական նաւահանգիստներում, նրանց երկարատև կանգառները, անգլիական մեծ գաղութների այստեղ մշտական բնակելը, անգլիական վաճառականների անմիջական յարաբերութիւնը ճապոնացի վաճառականների հետ, ի հարկէ, օժանդակում են անգլիական գիտութեան տարածուելուն ճապոնացիների մէջ: Եւ կան քաղաքներ, որտեղ միայն անգլիներէն լեզու կը լսէք, օրինակ, Նագասակի, Կօբէ, Իօկահամա, Տօկիօ, Խակոգադէ:

Ճապոնիայում կայ սակայն մի տեղ, ուր ամբողջ ազգաբնակչութիւնը խօսում է ռուսերէն ազճատված լեզուով: Իս Ինօսան է, Նագասակի քաղաքի արուարձանը, մեր Վլադիվոստօկին մօտ: Այս քաղաքի ծագումը հետևեալն է: Վա-

ղուց, Ռուսուրի նահանգը Ռուսաստանին միացնելու ժամանակից ի վեր (1860 թ.), Վլադիվոստօկում կանգնած է մեր խաղաղ-օվկիանական նաւատորմիղը, որ բաղկացած է պատերազմական մեծ զրահակիր և ուրիշ աւելի մանր պատերազմական նաւերից: Այս նաւերը գալիս են Բալտիկ ծովից (Սրօնշղատ) և այստեղ պէտք է մի քանի տարի շարունակ ծովային պատերազմական գործուղութիւնների վարժուեն, որից յետոյ փոխարինվում են նոր նաւերով: Նրանց նպատակն է Խաղաղ Ովկիանոսի և ասիական Սրևելքում գտնուող մեր կայուածները պահպանել: Սրանք յաճախ լողում են ճապոնական ծովի և Մեծ Ովկիանոսի ջրերում. բայց նրանց մշտական կայանը՝ Վլադիվոստօկն է, որտեղ և կենում է Արևելեան Ովկիանոսի նաւահանգիստների և նաւատորմի հրամանատարը:

Վլադիվոստօկը սակայն ունի մի յատկութիւն, որ միշտ յարմարութիւն չէ տալիս մեր խաղաղ-օվկիանական նաւերին այնտեղ մնալու: Նա սովորաբար սառչում է ձմրան չորս ամիսներում — գեկտեմբերից մինչև մարտ, և ծածկվում է սառուցի այնպիսի հաստ շերտով, որ նոյն իսկ զըրահակիր նաւերի սուր քթերը չեն կարողանում կտրել սառուցը:

Այս պատճառով, հէնց որ սառնամանիքը սկսվում է, մեր նաւատորմիղը կամայ-ակամայ



ապաստան է փնտրում Վլադիվոստոկին մօտ ուրիշ չը սառչող նաւահանգիստներում.—կօրէական, չինական և ճապոնական ջրերում:

Սրանցից աւելի բարեկարգը համարվում են վերջինները: Ուստի և նրանք դարձել են ուսաց նաւատորմի զի սիրած տեղը: Նրանք ապաստանում են մեծ մասամբ նապասակի նաւահանգստում:

Նրանք, ապրելով այստեղ 4—5 ամիս, հետզհետէ ծանօթացան տեղական ազգաբնակութեան հետ: Բայց նոյն ժամանակ, երբ օտարերկրացիները բնակութիւն էին հաստատում քաղաքի մէջ, ուս ծովագնացները իրանց համար ժամանակաւոր բնակութիւն հաստատեցին նազասակիի հակադիր ափում, նրա Ինօսա կոչուած արուարձանում:

Այս բնտրութիւնը շատ յաջող է: Ինօսան գտնվում է բարձր լեռնաշղթաների ստորոտում, որոնք պատսպարում են խորշը և ծածկուած են մշտադաւար ծառերով, Ինօսայի շուրջը կան հրնաւորց եղևնեայ և բամբուկի անտառներ, կիրճեր և հովիտներ, կարկաչահոս, արագահոս վտակներով: Ինօսայի ներքևում ձգուած է նազասակիի հարթ նաւակայանը: Ռուս նաւագնացներն այնպէս հիմնաւոր կերպով են հիմնուել այս արուարձանում, որ սա նմանում է ուս-եապոնական խառն գաղութի: Յուցանակների կէսը

գրած է ուսերէն. համարեա ամբողջ ազգաբնակութիւնը փոքրից մինչև մեծը խօսում են աղաւաղված ուսերէն լեզուով, և բնակիչները մեծ մասամբ մի տեսակ ուս-եապոնական տեսք ունեն: Նոյն իսկ պատահում են ուս մարդիկ, ճապոնական խալաթ և սանդալ հագած, այնպէս որ շատ ծիծաղելի է վրանց վրա նայելը:

Բանը նրանումն է, որ ճապոնացիները շատ համբերող են դէպի իրանց ուս հիւրերը և օրախօսութեամբ կնուծեան են տալիս ուսներին իրանց աղջիկներն ու քոյրերը: Այս պատճառով շատ ուսներ այստեղ ընտանիք են կազմում: Այս տողերը գրողը շատ է հանդիպել այդպիսի խառնուրդ ընտանիքների: Ճապոնուհի ամուսինները և ուս տղամարդիք շատ սիրով են ապրում միմեանց հետ:

Շատ անգամ ծիծաղելի է, երբ տեսնում էք Պօլտավայի ու Չերնիգովի նահանգների մեր խօսիչներին փոքր ճապոնուհիների ամուսին դարձած. նրանք նմանում են հսկաների, զետեղուած մանկական փօքրիկ տնակներում: Մի անգամ ես տեսայ պօլտավցի մի ձերտնի խօսիչի, որ երբեմն ուսական նաւատորմիղում ծառայող էր եղել. նա ամուսնացած էր ճապոնուհու հետ: Ինչ տեսնելով, նա սաստիկ շփոթվեց, ամաչեց, կարմրեց և իր կիբիմօնի երկար փէշերը ժողովելով հարկաւոր համարեց իբր իրան արդարացնելու

համար նկատել «Թէև նա քրիստոնեիայ չէ, բայց շատ լաւ կին է»:

Նա նրան հարցրի, թէ ինչպէս է խօսում նա ճապոնուհու հետ, քանի որ ոչ մի բառ չը գիտէ ճապոներէն:

—Նա բոլորը հասկանում է...:

—Օրինակ, հետաքրքրուեցի ես:

—Այսպէս նա ասում է «բանդայ» (ձեր կենացը) և իսկոյն բերում է «սակուն»:

Նա ծիծաղեցի: Բայց ուղում էի մի քանի հարցեր էլ տալ նրան, երբ նա անսպասելի կերպով ասաց.

—Վատը այն է, որ նա ճապոնական գօրիւլաի է նման, և շտապեց գնալ, ուղեհարով ընդհատել այս անհաճոյ խօսակցութիւնը: Նա ստիպված եղայ բաւականանալ այնքանով, որքան լսեցի նրանից \*):

Բայց այսպիսի բացառական բնութիւն ունի միայն Ինօսան: Իսկ միւս ճապոնական նաւահանգիստները բոլորովին նման են անգլիականին, այն տարբերութեամբ միայն, որ շնորհիւ լաւ կլիմայի, գեղարուեստական դիրքի և բոյսերի ճոխութեան, նրանք աւելի գեղեցիկ են, քան անգլիական քաղաքները:

Վերջին ժամանակներս ճապոնական քաղաքները ստատիկ մեծանում են և հարստանում: Հա-

\*) Տես Ջրէյլի «ճապոնիա և ճապոնացիներ» գիրքը:

զորդակցութեան, դիւրութիւնը, շնորհիւ երկաթուղիների և շողենաւերի շատութեան, առողջարար, զով և բարեխառն կլիման այստեղ միախառնուել են, որպէսզի այդ քաղաքների համար ստեղծեն նախանձելի ապագայ և այն նշանաւոր դիրքը, որ այժմ նրանք ունեն: Այս նաւահանգը ըստային քաղաքներից նշանաւոր են Նագասակի, Սիւժոնսեկի, Կոբէ, Իօկահամա, Տօկիօ, Խակոգագէ: Նիիգատա: Սրանք ամենքն էլ նշանաւոր են իրանց զարմանալի բարեկարգութեամբ և գեղեցկութեամբ, նրանցից ամենագեղեցիկը— Կոբէն է:

Այս քաղաքների առևտրական գործառութիւնները հարիւրաւոր միլիոն բուրջուց անց է: Միայն Կոբէի մի տարուայ առևտուրը մեր փողով 50 միլ. բուրջուց աւելի է: Նրանց նաւակաշարանները լի են բոլոր ազգերի նաւերով: Այստեղ են նոյնպէս Եւրոպայի, Ասիայի, Աւստրալիայի և Ամերիկայի մէջ գլխաւոր հազորդակցութիւն և վարող նաւերը: Այս նաւերը ամեն օր գալիս և գնում են:

Օտար ապրանքի ներմուծումը այս նաւահանգիստների միջոցով տարեց տարի արագութեամբ մեծանում է: Ներմուծվում են գլխաւորապէս մետաղէ շինուածքներ, կտաւ և բուրգ, իսկ նաւահանգիստներից էլ արտահանվում է ճապոնիայի ապրանքը: Վերջերս աւելի մեծացաւ

թէյի արտահանութիւնը դէպի Միացեալ Նահանգները և Կանադա, բրնձի ու կամֆորի \*) արտահանութիւնը դէպի Եւրոպա և Ամերիկա:

Այստեղ բնակող անգլիացիներին շատութեան պատճառով դուք կը հանդիպէք ամեն տեսակ հիմնարկութիւնների, որոնց դուք կը գտնէք որևէ զուտ անգլիական քաղաքում:

Նոյն իսկ այստեղ շատ կէտերում կան բիրտաներ, օտարազգի ժողովարաններ, լիւտերական և կաթոլիկ եկեղեցիներ, ուսումնարաններ, որ հիմնել է անգլիական «գթութեան քոյրերի ընկերութիւնը», երկսեռ մանուկների համար: Իւրաքանչիւր քաղաքում կայ 1—2 լրագիր անգլիական և ճապոնական լեզուներով:

Սակայն ճապոնիայում դեռ կան քաղաքներ (և շատ), որոնք լիովին պահպանել են իրանց ազգային տեսքն ու բնաւորութիւնը: Սովորաբար սրանք ծովեզրից հեռու, երկրի խորքերում գրտնուող քաղաքներն են, իսկ նաւահանգիստներից—միայն Տօկիօն—ճապոնիայի մայրաքաղաքը: Մինչև այժմ եւրոպացիներն իրաւունք չունեն այնտեղ հիմնաւոր բնակութիւն հաստատելու (իսկ Տօկիօում նրանց համար կայ առանձին քաղաքամասն, որ կոչվում է «Տակիշի»)։ այնտեղ կամ բոլորովին չը կան եւրոպացիներ, և կամ շատ քիչ կան, ուստի նրանց ազդեցութիւնը աննշան է:

\*) Կամֆորի ծառը Տե՛ծ քանակութեամբ է աճում ճապոնիայում:

Երբ մտնում ես եւրոպական ազդեցութեան չենթարկուած քաղաք, ընկնում ես բոլորովին նոր մթնոլորտի մէջ: Այստեղ կը տեսնես զուտ ճապոնիան, իր նեղ փողոցներով, մի կամ երկյարկանի փայտեայ տնակներով, գեղեցիկ տաճարներով, գոյնզգոյն ճապոնական լապտերներով և ցուցանակներով: Վերջինները չեն փակցրած պատերին կամ կախ տուած, այլ կտուրի տակից, փողոցի վրա ձգված են հօրիզոնական ձողեր, որոնց վրա կպցրված են երկար և բազմագոյն կըտաւէ կտորներ—վառ կարմիր, գեղին, կանանչ, կապոյտ, սպիտակ, բազմագոյն շինական նշաններով տաճոտված: Այդ կտորները ազատ կախ են ընկած օդում և ճոճվում են ամենափոքր հողմից ու գեղանկար տեսք են ընծայում փողոցին: Այդ կողմից առանձնապէս գեղեցիկ է ճապոնիայի մայրաքաղաքի գլխաւոր փողոցը—«Չինզան»: Նրա տասնեակ վերստ երկարութեամբ պատերից քարշ է արած գոյնզգոյն կտաւէ ցուցանակներ և մինայուածքով թւում է, թէ ամբողջ քաղաքը տասնայուածքով թւում է, թէ ամբողջ քաղաքը տասնակ հազարաւոր դրօշակներով է զարդարած: Չինզան ձգուած է ուղիղ գծով և նրա երկու կողմից տնկված են կանաչ ծառեր, երկյարկանի փայտաշէն տների հանդէպ: Նա կազմում է մի հսկայական կանաչ ծառուղի: Բոլոր փողոցը և մայթերը լի են անցորդներով: «Չինզան» իր ամբողջ տարածութեամբ, Տօկիօյի միւս փողոցներին

նման, կտրուած է ջրանցքներով: Հարթայատակ ճապոնական նաւերով և մակոյկներով լի են այդ ջրանցքները. նրանք լողում են ամեն կողմ, կլտրում կենսալի փողոցը և մի հրաշալի տեսք տալիս նրան:

Մի քանի անկիւններում դուք կը հանդիպէք ճապոնացի ազքատներին: Տեղական սովորութեան համաձայն նրանց գլուխները ծածկված են ուռնու կամ բամբուկի ճիւղերից հիւսած կողովներով: Այս մուրացկանների դէմքերը բոլորովին չեն երևում: Նրանք անցորդների ու շաղբութիւնը դարձնում են իրանց վրա մի երկար սուրցով: Մածկած երեսներով ման գալու այս սովորութիւնը ճապոնիայում շատ վաղուց է տիրապետում: Մի ժամանակ մուրացկան վիճակի մէջ էին գտնվում պաշտօնագործի հպարտ դայմիօսները: Մուրացկանութիւնն էր մնացել նրանց համար ապրուստի միակ միջոցը: Եւ ահա, բնականաբար, ամօթից դրդուած, նրանք դիմում էին այդ միջոցին, որպէսզի ծածկեն իրանց երեսները ամբօխի հետաքրքիր և երբեմն չարախնդաց նայուածքներին: Այս սովորութիւնն այն ժամանակից մնում է մինչև այսօր:

«Չինգայի» ծայրում գտնվում են գլխաւոր շուկան և զանազան վաճառատեղիները: Քաղաքի մնացեալ փողոցներն աւելի նեղ են, սակայն զարմանալի մաքուր: Իւրաքանչիւր անակի մօտ

չինված է փոքրիկ պարտէզ: Արտաքին պատերը սովորաբար, ցածր են, և անցներու ժամանակ կարելի է պարզ կերպով տեսնել բնակարանի ներքինը: Նրանց կահկարասիքը բաւականին համեստ է, և երբեմն էլ բոլորովին չէ լինում կահկարասիք, բացի շարժական վառարանից, որի վրա պատրաստվում է ճապոնացու պարզ կերակուրը:

Այստեղ մեծ մասամբ ապրում են արհեստաւորներն ու վարպետները: Նրանք շարժական պատի մօտ են աշխատում: Օտարերկրացին այստեղ կարող է տեսնել այն ամենը, ինչ որ արտադրում է ճապոնացի արհեստաւորը: Մէկ տեղում հիւսում են ամենանորը խսիրներ բրնձի յարդից, մի ուրիշ տեղում պատրաստում են ճապոնական հարթ հովանոցներ, երրորդ տեղում շինում են լաքած իրեր, որոնցով հուշակուած է ճապոնիան:

Ամբողջ փողոցներ առևտուր են անում այսպէս կոչուած ճապոնական հազուադիւր իրերով.— ջնարակված (լաքված) իրերով, յախճապակեայ և կոթազօնից շինված իրերով, և այլն: Այստեղ առևտուրը կատարվում է հէնց փողոցում: Փողոցներով անց ու դարձ են անում երկանիւթախի մեծ սայլեր, այս լեռնոտ երկրի արտադրութիւններով բարձուած, — թէյ, յախճապակի, ծխախոտ, բրինձ, խսիր, քամֆօրա, պղպեղ և այլն: Ճապոն

նիայի մնացած բոլոր քաղաքները նման են այս նկարագրուած քաղաքին: Ամեն տեղ ազգային կերիմօններ և սանդաղներ հագած բազմաթիւ երկսեռ մարդկանց հարահրոց, անսպառ աղմուկ, ծիծաղ և կատակ և նոյնպիսի օրինակելի կարգ ու կանոն: Առաւելապէս աչքի են ընկնում երեկոները պետական թաղերը, երբ շոգն անցնում է, և կանաչի մէջ թաղուած ճապոնական քաղաքի վրա տիրում է անդորր, մեղմ, աստղալից գիշեր, երբ երեկոյի մօտենալով բոլոր փողօցները, հրապարակները, խանութները լուսաւորվում են ճապոնական գոյնգգոյն թղթեայ լապտերներով, երբ քաղաքն ընդունում է հէքիաթական տեսք: Ի հարկէ, ոչ մի եւրոպական քաղաքում չի կարելի հանդիպել սրա նման բանի: Փողօցները կարծես գունաւոր կրակների ծովով են ճարակված. յետ ու առաջ են վազում մարդ—ձիերը իրանց թեթեւաշարժ և փայլուն զսպանակաւոր սայլերով, քարէ մայթերի վրա, իբրև ստուերներ կանգնում և շարժվում են կիսա—ֆանտաստիական գէմքեր, իրանց կիրիմօնների մէջ, շարժուն թեզանիքներով, որոնք մի արտասովոր կենդանու թեւքեր են թւում: Բայց շուտով ամեն ինչ լոււմ է. ուշացած վերջին ճամբորդը հեռանում է փողօցից, և միայն գունաւոր լապտերի ճառագայթները կամ թէ բաց պատից դուրս թափւող լոյսը

յիշեցնում են, որ այս հէքիաթական թագաւորութիւնը բնակուած է իսկական մարդկանցով:

Մի քանի քաղաքամասեր անցնելով, դուք կը մտնէք բոլորովին նոր աշխարհ, — ելքարական լուսաւորութիւն, ընտիր ձիերով լծված գեղեցիկ կառքեր, վերջին մոդայով շքեղ հագուստներ հագած տղամարդիկ և կանայք: Այստեղ ապրում են եւրոպացիները. նոյն իսկ այստեղի ճապոնացիները նման չեն քիչ առաջ մեր տեսած ճապոնացիներին: Սրանք չունեն կիրիմօն, սանդաղներ և գլխի վրա հին ձևի կանացի մազահիւս: Եւ սա դարմանալի չէ:—Ճապոնիայի ներքին և արտաքին կեանքի մէջ վերջին երեսուն տարուայ ընթացքում կատարուած փոփոխութիւնը չէր կարող չաղդել և նրանց արտաքինի վրա, և ճապոնական ազգային մազահիւսն ու հագուստն հետզհետէ տեղի են տալիս եւրոպական հագուստին: Պետական ծառայութեան մէջ գտնւող բոլոր պաշտօնեաները վաղուց արդէն ընդմիշտ թողել են իրանց գունաւոր կիրիմօնները, միջնադարեան մեծ, ծանր և անյարմար զրահաւորութիւնը. պաշտօնեաները ծառայութեան մէջ հագնում են վից—մունդիւ, սերթուկ եւրոպական ձևով, զինւորական շոր, թուր, սուր: Եւ միայն վաճառականները, արհեստաւորները, ազատ ազնուականները, հողատէրերը և գիւղացի երկրագործները պահպանել են ազգային հին հագուստը: Այս

հագուստը սակայն, հաւանականաբար, չի փոխարինուի եւրոպականով, որը տեղական կլիմայական պայմանների շնորհիւ ճապոնացիներին թրուում է ծանր ու անյարմար: Նշանաւոր է, ի միջի այլոց, որ թէև նաւահանգիստային մեծ քաղաքներում և տեղական հասարակութեան բարձր շրջաններում ճապոնացիների կէս մասը արտաքինով եւրոպականացել է, սակայն ճապոնուհի կանայք հաւատարիմ են մնացել իրանց չքեղ հագուստին և բոլորովին անճոռնի սանդալներին: Բայց նրանք ճապոնական կայսրի արքունիքում հազնում են եւրոպական շորեր և այս բանով նրանք պարտական են իրանց կայսրուհուն, որ երկրպագու է եւրոպականութեան: Այսպէս, օրինակ, վերջերս ճապոնիայի կայսրուհու կարգադրութեամբ բոլոր բարձրաստիճան և պալատական կանայք պարտաւոր են պալատում երեւալ եւրոպական հագուստով: Սակայն կայսերական պալատից դուրս եւրոպական հագուստն ընդունելի չէ, և ամբողջ ճապոնիայում կանայք կապուած են մնում իրանց հնաւանդ սովորութիւններին:

Իրա փոխարէն տղամարդիկ, ինչպէս ասացի, այդ կողմից կանանցից շատ են առաջ անցել, իսկ պետական, քաղաքացիական և զինուորական ծառայութեան մէջ գտնվածները արդէն եւրոպական շորեր են հագնում:

Ճապոնացիների շփումն եւրոպացիների հետ, պետական կազմի և կառավարութեան բարեփոխութիւնների հետ միասին առաջացրեց և զօրքի ու նաւատորմի բարեփոխումն: Ճապոնացիները լաւ էին հասկանում, որ այն ժամանակից, երբ բազբը նրանց ընդհարեց երես առ երես լաւ զինաւորված ու վարժված եւրոպացիների և ամերիկացիների հետ, նախկին անդրձրհեղեան հրացաններն ու փայտեայ նաւերը իրանց դէպի կորուստը կը մղեն: Միևնոյն ժամանակ պահանջվում էր և զինուորակոչի սիստեմի բարեկարգումն: Բայց սա ճապոնիայի ամենադժուար բարեկարգումն էր, որովհետև ժամանակը սուղ էր, — պէտք էր շտապով վերակազմել զօրքն ու նաւատորմիղը, թողնելով հին սովորութիւնները, ձևերը և կարգերը: Եւ հարկաւոր էր մեծ խոհեմութիւն ու իմաստութիւն, որպէսզի ծանր զինուորակոչութիւնը մուծէին ժողովրդի մէջ և ընդելացնէին նրան:

Ճապոնական պետութիւնը այս դժուար դրութիւնից պատուով դուրս ելաւ: Սրանով նա մեծ մասամբ պարտական է այն գեղեցիկ սովորութեան, որ մտցրեց կայսրը, — նախ քան նոր օրէնք մտցնելը՝ փոխել նախկին կարգը. նա ժողովրդին ծանօթացնում է այն պատճառների հետ, որոնք ստիպեցին նրան այդ անել և ցոյց է տալիս փոփոխութեան կարևորութիւնը: Փողովուրդը

հնարաւորութիւն է ստանում ուրեմն ծանօթա-  
նայ առաջիկայ փոփոխութիւնների հետ, պատ-  
րաստուել նրանց ընդունելու, կշռադատել նրանց  
կարեւորութիւնը և ապա խոհեմաբար ընդունել  
իբրև անխուսափելի անհրաժեշտութիւն: Առ հայ-  
րենիքը ունեցած խորին սէրը, որով օժտուած է  
ամեն մի ճապոնացի, ի հարկէ, նպաստում է  
գործին: Ահա թէ ինչու ճապոնիան հանդիսա-  
նում է մի երկիր, որտեղ յաճախակի և անսպա-  
սելի փոփոխութիւնները կատարվում են առանց  
յուզմունքի: Կառավարութիւնը ըմբռնեց, որ իւ-  
րաքանչիւր բարեփոխութեան աշուղտութիւնը կա-  
խուած է մեծ մասամբ ազգաբնակչութեան հա-  
մակրութիւնից, ուստի և նախօրօք ծանօթաց-  
նում, բացատրում է նրան գործի անհրաժեշտու-  
թիւնը: Բաւական գրագէտ և զարգացած ազ-  
գաբնակչութիւնն էլ իր կողմից սաստիկ սիրում է  
իր հայրենիքը և սիրով հաշտվում նորութիւննե-  
րի ու բարեփոխումների հետ: Նա իր անձնական  
երջանկութիւնից բարձր է գնահատում հայրենի-  
քի բարօրութիւնը և ամեն կերպ աջակցում է  
կառավարութեան բարենորոգումներ մտցնելու:

Ինչպէս ասացինք, վերածնունդ ճապոնիայի  
լոյր բարենորոգումներից ամենադժուարը զօրքի  
և նաւատորմի վերակազմութիւնն էր. և սա ոչ  
թէ միայն այն պատճառով, որ ազգաբնակչութիւ-  
նը անծանօթ էր զինուորական ծառայութեան

հետ, այլ և այն պատճառով, որ այս ծառայու-  
թիւնը ոչնչացնում էր ճապոնացու հազարամեայ  
հասկացողութիւնները ու սովորութիւնները: Բա-  
նը նրանումն է, որ ինչպէս գիտենք, ճապոնիա-  
յում (նախկին) տիրում էր դասակարգերի (կաս-  
տերի) ստորաբաժանումն: Սրանցից իւրաքանչիւ-  
րը ամեն կերպ խուսափում էր միւսից: Գասա-  
կարգերը բաժանվում էին բարձր և ստորին: Եւ  
մինչ նրանցից մի քանիսն օգտվում էին իրաւունք-  
ներով, արտօնութիւններով ու առանձնաշնորհու-  
թիւններով, միւսները ոչ մի բան չունէին: Այն  
ժամանակ, երբ նրանցից շատերը ծնվում էին  
իբրև պետեր, միւսները մինչև մահ մնում էին  
հպատակ ստրուկներ: Այն ժամանակ, երբ մի  
քանիսները ստանում էին բարձր պաշտօններ,  
միւսները պարագում էին ընդհանուրից արհա-  
մարհուած գործերով: Նոր վերակազմած զօրքը  
ստիպուած էր այդ երկու խմբերը հաշտեցնել և  
միացնել, ոչնչացնելով նրանց մէջ եղած խոր ան-  
դունդը:

Ահա թէ ինչու ճապոնիայում զօրքի վերա-  
կազմութիւնը տևում էր այդքան երկար, — հա-  
մարեա քսան տարի: Տէրութիւնը կամաց-կամաց  
ժողովրդին պատրաստում էր այս րէֆօրմի հա-  
մար, և վերջապէս, 1883 թ. միայն հրատարակեց  
այն զինուորական սիստեմն ու կազմակերպու թիւ-  
նը, որ գոյութիւն ունի մինչև այժմ ճապոնիա-

յում, որ նրան պարգևեց մի շարք փառաւոր  
 յայթույթիւններ՝ Զինաստանի դէմ, հաւատ և  
 յարգանք ներշնչեց դէպի իր հզօրութիւնը—եւ-  
 րօսական և ամերիկական պետութիւնների կողմից։

Այդ թուականից զօրքը և նաւատորմիլը վե-  
 րակազմուեցին բոլորովին եւրոպական ձևով։ Հրա-  
 տարակուած օրէնքի հիման վրա զինւորական  
 ծառայութիւնը պարտաւորական դարձաւ բոլորի-  
 համար, առանց ծագման խտրութեան։ Ամեն մի  
 ճապոնացի հէնց որ տաննեօթ տարեկան դար-  
 ձաւ, պէտք է զինւորական ծառայութիւն կա-  
 տարի։ Այդ ծառայութիւնը մեր հասկացողու-  
 թեամբ երկար է տևում—մօտ 12 տարի, այս-  
 ինքն մինչև 29 տարեկան հասակը։ Դրանցից  
 ճիշդ է, զօրքի մէջ իսկական ծառայութեան հա-  
 մար միայն երեք տարի, իսկ մնացած ինն տա-  
 րիներից չորս տարին զինւորը ծառայում է մըշ-  
 տական պահեստի զօրքի մէջ, իսկ հինգ տարին  
 նա համարվում է միայն պահեստի։ Տասներկու-  
 ամեայ ժամանակամիջոցը վերջացնելով, իւրաքան-  
 չիւր ճապոնացի մինչև քառասուն տարեկան հա-  
 սակը հաշվում է շրջանային զօրքի ցուցակում և  
 միայն պատերազմի դէպքումն է կանչվում ծա-  
 ռայութեան, բայց թէ մշտական և թէ պահեստի  
 զօրքերում ճապոնացին ստիպուած չէ լինում ծա-  
 ռայել ինն տարի շարունակ, այլ տարուայ ըն-  
 թացքում միայն երկու ամիս։

Ճապոնիայի զօրքի կազմակերպութիւնը նոյ-  
 նն է, ինչ որ եւրոպականը։ Զինւորները բա-  
 ժանվում են վաշտերի, բատալիօնների, գնդերի,  
 բրիգադաների, դիվիզիաների։ Ամբողջ երկիրը  
 բաժանված է զինւորական եօթը շրջանի։ Տէ-  
 րութիւնը նոյնպէս եռանդով հոգս է տանում  
 զինւորական պետերի կրթութեան և ուսման  
 մասին։ Ուստի այստեղ համարեա ամեն մի մեծ  
 քաղաքում կան զինւորական դպրոցներ, որտե-  
 ղից ամեն տարի դուրս են գալիս մեծ քանա-  
 կութեամբ լաւ պատրաստված և զինւորական  
 գործին վարժված սպաներ։ Այս պատճառով  
 այժմ ճապոնական զօրքի մէջ չի կարելի գտնել  
 ոչ մի օտարազգի սպայ, կամ ժարդիչ, որոնց օգ-  
 նութեանն էին դիմում ճապոնացիները առաջին  
 ժամանակները։ Այժմ բոլոր սպաները ճապոնա-  
 ցիներ են և, զինւորական գործին տեղեակ մարդ-  
 կանց կարծիքով, ճապոնական զինւորական դըպ-  
 րոցները և ակադէմիաները շատ լաւ են կազմա-  
 կերպված։

Մեծ Ովկիանոսի ափերում ճապոնիայի աճող  
 նշանակութիւնը թոյլ չէ տալիս զօրքի ներկայ  
 կազմակերպութեան վրա կանգ առնել, և ճապո-  
 նիան ձգտում է իր զինւորական և ծովային ոյ-  
 ժերը մեծացնել, որ դժբաղդաբար նրանից խը-  
 լում է մեծ եռանդ և միջոցներ, որոնք կարելի



էր դորձադրել աւելի օգտակար և խաղաղասէր նպատակների համար:

Զօրքի այս ուժեղացումը ճապոնիայի համար, իհարկէ, շատ վնասակար հետեանքներ ունի: Երկրի ոյժերն արդէն սաստիկ լարված են վերջին 30 տարուայ ընթացքում կատարված դէպքերի պատճառով: Ժամանակը և աշխատող ձեռքը այժմ շատ թանկ է նրա համար: Բայց այս մեծ չարիքի—զօրքի մեծացնելու դէմ, չարիք, որով համակվել է ամբողջ աշխարհը և որը թուլացնում է նրա ոյժերը, սչինչ չէ կարելի տեսել: Եւ ճապոնիան, այս նորից ապրել սկսող երկիրը պէտք է զոհեր սայ պատերազմի Աստծուն, պէտք է իր ժողովրդի ամենաընտիր մասը, իր երիտասարդութեան ծաղիկը, իր վերջին միջոցները սայ մեր ժամանակի այդ ամենահզօր չարիքին \*):

Ճիշդն ասած, ճապոնիան, Չինաստանի հետ ունեցած կռուի վերջում, չ'նայած իր փոքրութեան, ունէր մեծ քանակութեամբ զօրք և նա-

\*) Այդ տեսակետից շատ ցուալի է, որ ճապոնիան չը կտրուցաւ զօրքի իրան և պատերազմ սկսեց Ռուսաստանի հետ. ցուալի է նրա համար, որ այդ պատերազմը շատ արկատի հետեանքներ կարտադրէ ճապոնիայի համար: Եթէ ենթադրենք նոյն իսկ, որ շատ հաւանական չէ, թէ նա յողթող դուրս գայ, դարձեալ նրա ոյժերն այնքան սպառված կը լինեն, որ երկար տարիներ կանգ կառնի նրա վերածնութեան և կազմակերպութեան գործը, իսկ պարտութիւնը նրա համար կը լինի կատարեալ կործանումն:

ւատորմիդ: Օրինակ՝ նրա պատերազմիկ նաւատորմիդը բաղկացած էր 69 նաւերից, իսկ ցամաքային զօրքը—խաղաղ ժամանակ 70,000 մարդ, կռուի ժամանակ 268,000 մարդ, ի բաց առեալ հեծելազօրքը և այսպէս կոչուած «իզօմիլիցիան»: Դժուար է դտնել բաւական արդարացուցիչ պատճառ, թէ ինչի համար ճապոնիան ձրդտում է ուժեղացնել իր զինւորական ոյժերը, որոնք առանց այն էլ չափազանց են մի փոքր երկրի համար \*):

Եւ սակայն այս հարցի վրա ճապոնական տէրութիւնը ուրիշ կերպ է նայում, թէև դժուար է ասել, արդեօք անհրաժեշտութիւնն է ստիպում նրան այդ բանը անել, թէ պղգային պարծանքի զգացումը: Յամենայն դէպս, վերջին տեղեկութիւնների համաձայն ենթադրվում է զօրքի և նաւատորմիդի թիւը կրկնապատկել, այսինքն խաղաղ մամանակ 145,000 զինւոր, և պատերազմի ժամանակ <sup>1</sup>/<sub>2</sub> միլիօնից աւելի (520,000):

Այս աւելացումը կատարվում է սկսած 1897 թուականից: Իհարկէ, այս բանը առանց նիւթական ոյժերի լարման անհնարին է, ուստի ճապոնիան հետևում է եւրոպական տէրութիւնների օրինակին և աւելացնում է կողմնակի հար-

\*) Այժմ պարզվում է, որ նա նպատակ ունէր կռուել Ռուսաստանի հետ:

կերն ու փոխառութիւն է անում: Սակայն չը պէտք է կարծել, թէ ճապոնական տէրութեան գլխաւոր հոգսերը կայանում են միայն զօրքը ու ժեղացներու մէջ և որ նա միայն պատերազմական նպատակի համար չէ խնայում միջոցներ: Ընդհակառակը, պակաս ուշադրութիւն չէ դարձնում և խաղաղասիրական արդիւնաբերական նըպատակների վրա: Մենք արդէն գիտենք, թէ որքան շատ են հոգս տանում այստեղ լուսաւորութիւն և կրթութիւն տարածելու համար. այստեղ չը կայ ոչ մի անկիւն, որտեղ չը լինէին ուսումնարաններ, մատչելի ամենքին, առանց խըտութեան: Մասամբ նրանք պահփում են տէրութեան հաշուով, մասամբ էլ ազգաբնակութեան, որին տէրութիւնը կարիքի ժամանակ օգնութեան է հասնում:

Նոյն ծրագրին է հետևում տէրութիւնը նաև տեղական ֆաբրիկային և գործարանական արդիւնաբերութեան վերաբերմամբ:

Բանը նրանումն է, որ 30 տարի առաջ, երբ այս երկիրը նոր էր սկսել յարաբերութիւն եւրոպացիների հետ, և նրանց համար բաց արել իր նաւահանգիստները, քաղաքները և վաճառատեղիները, օտարազգի, մեծ մասամբ անգլիական արդիւնաբերութիւնը սպառնում էր դուրս քշել տեղական արտադրութիւնները: Անգլիացիները մտնում էին ամեն տեղ, գրաւում էին ա-

ռևտրական, արդիւնաբերական և գործարանական արտադրութիւնների բոլոր շրջանները և նըրանց հետ կուռելը համարեա անհնարին էր, որովհետև նրանք դալիս էին տեխնիկայի գիտութեամբ լաւ զինաւորված, կատարելագործված և փորձված՝ մեքենաների գործածութեան մէջ: Այն ժամանակ տէրութիւնը դիմեց հետևեալ միջոցին. աշխատելով ամեն կերպ սեպհական ֆաբրիկներ բանալ, ապահովելով նրանց, տէրութիւնը միևնոյն ժամանակ սկսեց արտասահման ուղարկել իր երիտասարդներին, Եւրոպայի տեխնիկայի նորագոյն կատարելագործութիւնները սովորելու համար: Միևնոյն ժամանակ նա սկսեց հիմնել բազմաթիւ ցուցահանդէսներ և մշտական արդիւնաբերական մուզէներ: Այստեղ հաւաքվում էր այն ամենը, ինչ որ արտադրում էր երկիրը և ինչ որ արտադրում էին օտարազգիները ձայոնիայում: Այս բանի շնորհիւ տեղական ազգաբնակութիւնը կատարեալ հնարաւորութիւն ունէր իր արտադրութիւնները համեմատել օտարազգիների արտադրութիւնների հետ և տեսնել իւրայիների պակասութիւնը: Ներկայումս ճապոնացիները համարեա թէ բոլորովին դուրս են վանել օտարազգիներին՝ իրանց ներքին վաճառատեղիներից, և տեղական արտադրութիւնը բաւական մեծացել է: Արդէն ճապոնացիները նախատեսում են այն ժամանակը, երբ օտար-

ազգիներին դուրս կը վանեն ամբողջ ասիական արևելքի (այսինքն Կորէայի և Չինաստանի) և մինչև անգամ Աւստրալիայի վաճառատելիներին:

Այս տեսակէտից նրանց առաջադիմութիւնն այնքան մեծ է և ձապոնիայի մրցութեան վըտանգաւորութիւնն այնքան լուրջ, որ շահագրգիռ երկիրները—Անգլիան և Ամերիկան զուր չեն զբաղված այս հարցով: Ընկերացիները օր ըստ օրէ նուաճում են նորանոր կենտրոններ իրանց արտադրութիւնները վաճառելու համար: Բայց այն ժամանակ, երբ ձապոնիան արագ առաջադիմութիւններ է անում, եւրոպացիներին և ամերիկացիներին փոխ առած արդիւնաբերութեան ճիւղերի մէջ, նրա ազգային գործուածների արտադրութիւնը և շինուածքը ոչ միայն չեն ընկնում, այլ և տարեց տարի աւելի ու աւելի են ծաղկում, և դա հասկանալի է: Բանը նրանումն է, որ ձապոնիան ինքնուրոյն արուեստի երկիր է, որի նմանը չը կայ ամբողջ աշխարհում, ինչպէս այդ նկատել են եւրոպացի ու ամերիկացի հմուտ անձինք: Այստեղ կան առանձին տեսակ նկարիչներ, վարպետներ և արուեստագէտներ, որոնք համարեա թէ անձանօթ են եւրոպային ու Ամերիկային: Ընկերացիական իւրաքանչիւր մեծ քաղաք կենտրոնատեղի է, այսպէս կոչուած ճապոնական «հազուագիւտութիւնները», որոնցով վաղուց հռչակուած է այս երկիրը, և ու-

րոնք 25 տարի առաջ մուծվելով Եւրոպա, ընդհանուր հետաքրքրութիւն շարժեցին արուեստը գնահատողների կողմին:

Քաղաքների շրջականերում և մօտակայ գիւղերում գտնվում են բազմաթիւ արհեստանոցներ, որտեղ կարելի է տեսնել զուտ ճապոնական արտադրութիւնների ընտիր տեսակներ—վերնիճէ, մետաղէ բանուածքներ, փղոսկրեայ և փայտի վըրա փորագրութիւններ, նկարչութիւն և այլն: Արտաքինով այս արհեստանոցները շատ պարզ են: Դուք այստեղ չէք գտնի ոչ փայլ, ոչ կահկարասիքի չքեղութիւն, ոչ թանկագին զարդարանք: Ընդհակառակն, ամեն ինչ պարզ է այնքան, որ երբ ճանապարհորդը հանդիպէ այստեղ, նրան կը թուի, թէ ընկել է որեէ հասարակ արհեստաւորի մօտ. մինչդեռ նրա առաջն են ելնում վարպետներ, որոնց հռչակը հայրենիքից դուրս է տարածուել:

Իւրաքանչիւր իսկական վարպետի բնորոշ յատկութիւնը սաստիկ համեստութիւնն է: Իսկական վարպետները իրանց արտադրութիւնները ի ցոյց չեն դնում հազուագիւտ իրերի բազմաթիւ խանութների մէջ: Եւ եթէ դուք ցանկանում էք տեսնել իսկական հազուագիւտ աւարկաներ, դուք չը պէտք է դիմէք քաղաքային մագազինները, ինչպէս այդ անում են սովորաբար ուղևորները, այլ պէտք է գնալ քաղաքի

ծայրերը, այն կանաչով պատմած փայտեայ տը-  
նակները և այդտեղ մի որ և է ետևի սենեա-  
կում որոնելու ճապոնական արուեստի հազուա-  
դիւտ արտագրութիւնները: Այս հասարակ սարք  
ու կարգի մէջ ճապոնացի վարպետի ձեռքից  
դուրս են գալիս այնպիսի առարկաներ, որոնք  
հիացնում են շատերին, և որոնք վկայում են  
ճապոնացի վարպետի աշխատասիրութեան, ե-  
ռանդի, անխոնջութեան ու տոկունութեան մա-  
սին:

Սակայն մենք արդէն խօսել ենք առաջուց  
ճապոնական ազգի այդ յատկութիւնների մասին:  
Ուստի միայն մի քանի խօսք կասենք այն վար-  
պետութիւնների մասին, որոնցով իրաւացի կեր-  
պով պարծենում են ճապոնացիները: Ճապոնա-  
կան ամենամեծ արուեստներից մէկը, որ դոյու-  
թիւն ունի 2,000 տարուց աւելի, համարվում  
է առարկաների լաքելը, որ շատ բարդ է  
և նման չէ մերինին: Դա կայանում է հետե-  
ւեալում: Առարկան, որը կամենում են լաքել,  
շինված ամենանուրբ, սպիտակ եղենափայտից,  
ծածկվում է շղարշով, որի վրայից դնում են բը-  
րնձէ սօսինձ և լաքի բարակ շերտ: Դրանից յե-  
տոյ առարկան դնում են հնոցի մէջ: Այդտեղ  
պահելով մի փոքր ժամանակ, նրան նորից ծած-  
կում են զանազան լաքերի շերտերով, ապա ա-  
մենանուրբ վրձիններով քաշում են բազմազան

նկարներ, զարդարում են սաղափով և թան-  
կագին քարերով: Այդպէս լաքելը տևում է ոչ  
թէ տասնեակ, այլ հարիւրաւոր և հազարաւոր  
տարիներ:

Թէ որքան բարդ է և մանրակրկիտ այդ աշ-  
խատանքը, երևում է նրանից, որ մի քանի ա-  
ռարկաներ շինվում են մի տարի և աւելի ժա-  
մանակում: Եւ սակայն այդ արդիւնաբերութիւնը  
տարածուած է ամբողջ երկրում, և լաքած գոր-  
ծուածները համարվում են ամենատարածուածը  
Ճապոնիայում, Այստեղ իւրաքանչիւր տան մէջ,  
սկսած ամենահարուստից մինչև յետին աղքատը,  
ամբողջ կահաւորութիւնը, թէ թանկագին, թէ  
հասարակ կահկարասիքը շինուած են լաքած  
փայտից:

Այս առարկաների արտագրութիւնը առաջ  
բերեց, ի թիւս այլոց, նաև մի առանձին տեսակ  
լաքի ծառեր աճեցնելը, որոնց հիւթից պատ-  
րաստվում է այդ թանկագին հեղուկը: Այդ  
պատճառով համարեա թէ ամբողջ Ճապոնիան  
ծածկուած է այդ ծառերի անտառներով: Երբե-  
մըն, վաղ ժամանակները, ճապոնացիները միայն  
չինում էին լաքած առարկաներ և լաքի ծառե-  
րը մինչև այսօր էլ առանձին խնամք և հոգա-  
տարութիւն են վայելում, առաւելապէս այն ժա-  
մանակից, երբ յանկարծ Ճապոնիայում այդ ծա-  
ռերի պակասութիւն զգացուեց և հազարաւոր

մարդկանց սպառնում էր առանց մի կտոր հացի մնալու տխուր վիճակը: Այն ժամանակ տէրութիւնը հրատարակեց օրէնք, որի համաձայն իւրաքանչիւր հողատէր պարտաւոր էր իր հողի վրա տնկել 40—80 լաքի ծառեր և պետական հարկերը փոխանակ դրամի ստացվում էին լաքով: Այդ բանի շնորհիւ լաքի ծառերի աճումը մեծ ծաւալ ընդունեց. և նա այժմ ձապոնիայում բուսնում է ամենուրեք, կերակրելով բազմաթիւ մարդկանց:

Ձապոնական յախճապակեայ կերտուածներն էլ մեծ հռչակ են վայելում, թէև նրանք այժմ վատացել են: Բայց և այնպէս ձապոնիան այդ կողմից Չինաստանի հետ միասին համարեա առաջին տեղն է բռնում աշխարհումս: Նրա լաքէ և յախճապակէ բանուածները տարէց տարի աւելի մեծ քանակութեամբ են պահանջվում արտասահմանում, որակը ծախվում են մեծ քանակութեամբ, և հայթհայթում են ձապոնացուն ոչ միայն նրա գլխաւոր եկամուտը, այլ և տարածում են նրա համբաւի փառքը, իբրև հմուտ վարպետի և գեղարուեստագէտի աշխարհիս բոլոր կողմերը:



VII.

ՃԱՊՈՆԱՅԻՆԵՐԻ ԿՐՕՆԸ:

Ձապոնացիների հետ մեր ծանօթութիւնը թերի կը մնար, եթէ եզրափակման մէջ մի քանի խօսք չստէինք այս ժողովրդի կրօնական հաւատալիքների մասին:

Ճիշդն ասած, ձապոնացիները առանձին կրօնասէր չեն: Բարձր գասակարգերը պաշտում են կրօնը միայն ձեւականութեան համար. իսկ հասարակ ժողովուրդը կատարում է միայն արտաքին ծէսերը: Ձապոնիայում հին, անիրապետող կրօնը, այսինքն ազգաբնակչութեան մեծամասնութեան և պետութեան գլուխ միկադոյի կրօնը—Շինտօն է: Նրա էութիւնը կայանում է—բնութեան ոյժերի աստուածացման մէջ, մեծ մասամբ նախնիքների աներեւոյթ հոգիների, որոնք կենդանի ժամանակ նշանաւոր գործեր են կատարել: Այս հանգամանքը միայն ցոյց է տալիս, որ այդ կրօնի իր հաւատացեալների վրա գր-

բաժ պարտաւորութիւնները շատ բարդ չեն: Նոյն իսկ այս կրօնը չունի որոշ աղօթքներ. նա չէ տալիս ոչ մի բարոյական օրէնքներ և քարոզներ, նա զուրկ է հանդիսաւոր ծիսակատարութիւններէ: Միակ բանը, որ այդ կրօնը պահանջում է իր հաւատացեալներէրից, է—արտաքին կողմից՝ տաճար յաճախել, ներքին կողմից՝—խղճի և սրտի մաքրութիւն: Ուրեմն այս կրօնը բառի բուն նշանակութեամբ սրտի կրօն է, ինչպէս և իրանք — ճապոնացիներն են կոչուած: Եւ եթէ այս բանի վրա աւերացնենք այն, որ բոս Շինտօ կրօնի, աստուածացրած հոգիները միաժամանակ ունեն մարդկային բոլոր թուրութիւնները, այն ժամանակ մենք լիակատար հասկացողութիւն կստանանք այդ կրօնի մասին: Նրա տաճարների պարգութիւնը համապատասխանում է իր վարդապետութեան պարգութեան: Նրանց միակ վարդարանքը կազմում են նրանց շրջապատող շքեղ անտառները, զանազան ծառերից կազմուած: Ընդհանրապէս այդ տաճարները նմանում են սովորական բնակարանների, իսկ նրանց մէջը բացի մէկ կամ երկու պահապան աստուածների ներկած արձաններից՝ ուրիշ ոչինչ չը կայ:

Թէ ինչպէս են նայում իրանք—ճապոնացիները այս ծիսազուրկ և պատուիրանազուրկ կրօնի վրա, երևում է հետեւեալ պատասխանից, որ տուել է ճապոնացին մի ճանապարհորդի:

Երբ վերջինս իր վարմանքը յայտնեց այդ վարդապետութեան պարզութեան և միաժամութեան մասին, ճապոնացին ասաց նրան.

—Քարոզները կարևոր են անբարոյական մարդկանց միայն. իսկ իր խղճին և սրտին հետևող ժողովուրդին նրանք հարկաւոր չեն:

Շինտօ կրօնից շատ տարբերվում է ճապոնիայում մի ուրիշ աւելի տարածուած կրօն—բուդդայականութիւնը: Այդ վարդապետութեան էութիւնը կայանում է անգոյութեան, մահուան կամ, ինչպէս ասում են, նիրվանի քարոզութեան մէջ, որ ներկայացնում է մարդկային գոյութեան վախճանը և որին հաւատացեալները պէտք է ձգտեն ապաշխարութեան և մարմնական ցանկութեան սպանութեան մէջ: Բուդդայականների հաւատով իսկական կեանքը գալիս է միայն մահից յետոյ (անգրգերեզմանային կեանք):

Սակայն ճապոնիայում բուդդայականութիւնը բոլորովին փոխուած ձև ունի: Հակառակ ակնկալութեան, նրա տաճարները աւելի շքեղ են, ծէսերը—բազմաթիւ և բարդ, կրօնական տօնակատարութիւնները և թափօրները չափազանց փառահեղ և շքազարդ: ճապոնական բուդդայականութեան և չինական ու հնդկական բուդդայականութեան այս տարբերութիւնը բացատրվում է նրանով, որ ճապոնացիները ի բնէ չափազանց անտարբեր են դէպի կրօնը, բայց սա-

կայն, ինչպէս մենք դիտենք, մեծ սէր ունեն գէ-  
պի զուարճութիւնները, հանգիստակատարութիւն-  
ները և ուրախութիւնները: Եթէ բուզդայական  
քարոզիչները այն ձևով ներմուծէին այդ կրօնը  
այստեղ, ինչպէս որ է Չինաստանում և Հնդկաս-  
տանում, նրանք չէին ունենայ ոչ մի աշուղութիւն:  
Նրանք շատ լաւ էին հասկանում այդ բանը, և  
ահա թէ ինչու այդ կրօնին տուին արտաքին  
փայլ և շուք, բացի այդ, ստեղծեցին հազարաւոր  
կուռքեր, ի պատիւ որոնց համարեա ամեն օր  
տեղի են ունենում հանդէսներ:

Ի դէպ է ասել, որ հէնց այս կրօնականնե-  
րին է պարտական այդ երկիրը իր ճարտարապե-  
տական և նկարչական արուեստի կոթողները:  
Բոլոր այս հոյակապ տաճարները լցուած են դե-  
ղեցիկ կուռքերով, նկարներով, փորագրութեամբ  
(մետաղի, փղօսկրի և փայտի վրա) և ուրիշ թան-  
գազին իրերով:

Այդ պատճառով էլ այստեղ շատ տեղեր  
կան երկրի զանազան կէտերում, որոնք ահապին  
հետաքրքրութիւն են ներկայացնում ճանապարհ-  
հորդի համար, և եւրոպացին շատ կը դժուարա-  
նար բոլոր այդ յիշատակաց արժանի իրերը քննե-  
լու, եթէ իրանք, ուսումնասէր ճապոնացիները,  
նրա օգնութեան չը հասնէին այս բանում:

Այսպէս, վերջին տեղեկութիւնների համա-  
ձայն, ճապոնիայի Տօկիօ մայրաքաղաքում ճապո-

նական բարձր աստիճանաւորների հովանաւորու-  
թեամբ բացուել է մի համակրելի ընկերութիւն  
«բարի եկաք» անունով: Հէնց այդ անունը միայն  
ցոյց է տալիս ընկերութեան նպատակները: Նա  
օտարերկրացուն դիւրութիւններ է տալիս—գնե-  
լու ճապոնական արուեստները, գնելու ճապոնա-  
կան արտադրութիւնները, այցելելու զանազան  
հետաքրքիր տեղերը և ճանապարհորդին ծանօ-  
թացնում է ճապոնիայի յայտնի մարդկանց հետ:  
Այս ընկերութեան գործունէութեան շնորհիւ ոչ  
մի ճանապարհորդ այժմ դժուարութիւնների չի  
հանդիպի այցելելու զանազան հետաքրքիր տե-  
ղեր, աւերակներ և կամ թէ ծանօթանալու նը-  
րանց պատմութեան հետ:

Թէ որքան եռանդուն է այս եօթնամեայ  
նորահիմն ընկերութեան գործունէութիւնը, երե-  
ւում է նրանից, որ վերջին երկու տարուայ ըն-  
թացքում միայն մօտ 2500 տոմսակ է տուել օ-  
տարերկրացիներին: Պէտք է նկատել նաև, որ  
«բարի եկաք» ընկերութիւնը իր գործունէութիւ-  
նից ոչ մի օգուտ չէ ստանում: Նա միայն հիւ-  
նուած է ճանապարհորդներին զանազան անա-  
խորժութիւններից ազատելու այս երկրում և  
իրանց հայրենիքի օգտի համար:

Շատ քիչ քաղաքակիրթ երկիրներ կարող են  
պարծենալ դէպի օտարերկրացիներն ունեցած  
այսպիսի յարաբերութեամբ:

ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՍԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ-  
ՆԵՐ ՃԱՊՈՆԻՍԻ ՄԱՍԻՆ:

Տարածութիւնը. ճապոնիայի տարածու-  
թիւնն է՝ 417,400 քառ. հազար մ.

Բնակիչների թիւը.—46,026,406 հոգի:

Կլիման.—Բարեխառն:

Արտադրութեան գլխաւոր առարկաները.—  
Բրինձ, հացահատիկներ, թէյ, մետաքս, բամ-  
պակ, ծխախոտ, զանձաֆիլ, թուղթ, լաք, յախ-  
ճապակ, բրօնզէ իրեր, էմալլ, բամբուկից, հընդ-  
կական եղեգնից, փղօսկրից, պղնձից, սատափից  
շինած իրեր, նկարներ, պատկերներ, կաւէ ա-  
մաններ, խեցեղէն, հովհարներ, քափուր և այլն:  
Կրօն.—Տիրող կրօնքը՝ շինտօականութիւն և  
բուդդայականութիւն. կան նաև կաթօլիկներ՝  
մօտ 51,000, բողոքական՝ 39,000, յունադաւան՝  
24,000:

Կառավարութեան ձև: ճապոնիան մի կայ-  
սրութիւն է, հիմնված 660 տարի ֆրիստօսից ա-  
ռաջ. մինչև 1868 թիւը բացարձակ և անսահ-  
ման միապետութիւն էր, բայց 1868 թուից ի  
վեր նա դարձել է սահմանադրական ու ժառան-  
գական միապետութիւն: Միապետը, կամ կայսրը

կոչվում է Միկադօ, և կառավարում է երկիրը  
պատասխանատու մինիստրութեան և ազնուա-  
կանների (վերին) ու համայնքների (ստորին) պար-  
լամենտների աջակցութեամբ. ստորին պարլա-  
մենտը բաղկացած է 300 պատգամաւորներից:  
Միկադօների հարստութիւնը գոյութիւն ունի  
2600 տարիներից ի վեր մի և նոյն ընտանիքի  
մէջ: Այժմեան Միկադօն կամ կայսրն է Մուց-  
հիթօ, որ ծնվել է 1852 թ. նոյեմբ. 3-ին և գահ  
բարձրացել 1867 թուին:

Գլխաւոր քաղաքներ: ճապոնիան բաժանված  
է 72 պրէֆեկտուրայի: Մայրաքաղաքն է՝ Տօկիօ  
կամ Իէդո, նիպոն կղզու արևելեան ափում,  
1,333,256 բնակիչ: Մնացեալ գլխաւոր քաղաք-  
ներն են՝ 1) Կիօթօ, նախկին մայրաքաղաքը—  
332,374 բնակիչ, 2) Օսակա, նաւահանգիստ և  
առևտրական քաղաք—753,375 բնակիչ, 3) Նա-  
գօսա—252,699 բնակիչ, 4) Կանսազաւա—82,374  
բնակիչ, 5) Կօբէ, նաւահանգիստ—194,598 բնա-  
կիչ, 6) Հիրոշիմա, նաւահանգիստ—113,926  
բնակիչ, 7) Իոքոհամա—188,455 բնակիչ, 8)  
Թայնան (Փօրմօզա կղզու վրա)—250,000 բնա-  
կիչ, 9) Թամուրի, (Փօրմօզ կղզու վրա)—100,000  
բնակիչ, 10) Կագօսիմա, նաւահանգիստ—54,034  
բն., 11) Կոււամուտու, նաւահանգիստ—58,376  
բն. 12) Նագասակի, նաւահանգիստ—74,542  
բնակիչ:



Երկարուղիներ: Առաջին ճապոնական երկաթուղին Տոկիոյի և Իօքոհամայի մէջ կառուցվեց 1872-ին 8 մղոն տարածութեամբ, բայց արդէն 1894-ին ճապոնիան ունէր 3600 կիլոմէտր երկաթուղիներ և 1,109 կիլոմէտր էլ շինվում էր. այժմ ունի 4747 կիլոմէտր երկաթուղի: Իւրաքանչիւր տարի մօտ 5 միլլիօն անցորդ կայ:

Չօք. — Խաղաղութեան ժամանակ զօրքը, որ կազմակերպված է բոլորովին եւրոպական ձևով, (պրուսական) 140,000 է, իսկ պատերազմի ժամանակ՝ 550,000 և բաժանված է 13 դիվիզիայի:

ՆԱՒԱՏՈՒԹՅՈՒՆ.— Ճապոնիան վերջին ժամանակներս շարունակ ձգտում էր դառնալ ծովային հզօր պետութիւն: 1895-ին, պարլամենտը յատկացրեց 200 միլլիօն իէն (իէնը հաւասար է 97 կոպէկի) նաւեր և զրահանաւեր շինելու համար, մի քիչ յետոյ դարձեալ յատկացրեց 117 միլլիօն: Ներկայումս նրա նաւատորմիցը բաղկացած է 75—80 նաւերից, 451 թնդանօթներով, և այդ նաւերից 6-ը զրահաւորներ են 128 թնդանօթներով, և 29 սուզանաւ: Նաւերը բոլորը գնված են Միացեալ — Նահանգների նաւաշինարաններում, բայց այժմ սկսել են նաւեր և զրահանաւ շինել նաև ճապոնիայում:

Ֆինանսական վիճակը. Մինչև ճապոնա-չինական պատերազմը (1894թ.) ճապոնիայի պետական ելիմտացոյցը համեստ էր. 1887-ին, նարլ

մուտքն էր 84 միլլիօն իէն, իսկ ծախքը՝ 83 միլլիօն, բայց 1898-ին մուտքը և ելքը հասել էին 239 միլլիօնի և ելքի գլխաւոր մասը կազմում են, ի հարկէ, սպառազինութեան և զօրքի ծախքերը:

Տնտեսական և ստեւսական վիճակը:— Ճապոնիայի նիւթական բարեկեցութիւնը հսկայական քայլերով է առաջ գնում: Գիւղատնտեսութիւնը, երկրագործութիւնը, որ առաջ էլ շատ զարգացած էր, մեծ առաջադիմութիւններ է գործում: Հանքերը տալիս են տարեկան 5,000,000 տօնն (տակառաչափ) քարածուխ, 20,000 տօնն պղինձ, 18,000 տօնն երկաթ, 22,000 տօնն նաւթ: Մշակող արդիւնաբերութիւնն ևս զարգանում է. բամպակային արդիւնաբերութիւնը 1895-ին հասել էր 196 միլլիօն իէնի: Առևտրական նաւերի թիւը 700 է, որոնք ունեն 5000,000 տօնն տեղաւորութիւն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջաբան հրատարակչի

- I. Ճապոնիան առաջ և այժմ...
- II. Առաջին տպաւորութիւնները:—Ճապոնացիները. Ճապոնուհիները և նրանց սովորութիւնները...
- III. Ճապոնացու աշխատութիւնը, ամուսնութիւնը և ընտանեկան կեանքը:
- IV. Ճապոնական գիւղը:—Բնութեան գեղեցկութիւնները:—Ճապոնացիների հնարագիտութիւնը:
- V. Ճապոնական զուարճութիւնները:—Ուսումնարաններ, ֆարրիկներ:
- VI. Ճապոնիայի ծովափնեայ նաւահանգիստային քաղաքները:—Անգլիացիների ազդեցութիւնը. —Ճապոնական փողոցը. —Ջորջը և նաւատորմիցը:—Ճապոնական հազուադիւտ իրերը:
- VII. Ճապոնացիների կրօնը...

ՎԵՐՁԱՐԱՆ

Ընդհանուր աշխարհագրական տեղեկութիւններ Ճապոնիայի մասին...




ՅԻՆԼ  
Ն Պ Ե



# ՀԵՌԱՒՈՐ-ԱՐԵՒԵԼՔ,

ՃԵՊՈՆԵՒԵՒ ԹՈՒՍ-ՃԵՊՈՆԵԿԵՆ ՊԵՏԵՐԱԶՄԻ ԲԵՄԸ





«Ազգային գրադարան»



NL0194701

